Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-567-25.04.2023,06.06.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին հոդվածով.

«Հոդված 5.1. Սույն օրենսգրքում կիրառվող հասկացությունների օգտագործման սահմանափակումը

1. Կազմակերպություններին արգելվում է իրենց անվանման մեջ «դատավոր» բառի կամ Հայաստանի Հանրապետության դատարանների անվանումների, դրանց բոլոր հոլովաձևերի կամ դրանք ներառող բառակապակցությունների, ինչպես նաև «դատավոր» բառի կամ Հայաստանի Հանրապետության դատարանների անվանումների օտարալեզու իմաստային թարգմանությունների օգտագործումը:»:

Հոդված 2. Օրենքի 79-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2-րդ մասով.

«2. Բարձրագույն դատական խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցերի լուծման, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի և դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումների դեմ բողոքները քննելու լիազորություններն

իրականացնում է սույն օրենսգրքով սահմանված կազմերի միջոցով, որոնք հանդես են գալիս Բարձրագույն դատական խորհրդի անունից՝ գործելով որպես Բարձրագույն դատական խորհուրդ:»:

Հոդված 3. Օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետը «նիստերը» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի» բառերով:

Հոդված 4. Օրենքի 85-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է ամբողջ կազմով, իսկ կարգապահական վարույթի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 19-րդ գլխի կանոնները՝ սույն հոդվածի պահանջների հաշվառմամբ:»:

Հոդված 5. Օրենքի 88-րդ հոդվածը լրացնել նոր՝ 8-րդ մասով.

«8. Բարձրագույն դատական խորհրդի՝ սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին և 156.2-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված կազմերում ընդգրկված անդամի ինքնաբացարկը կամ բացարկը չի ընդունվում, եթե սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կազմի անդամների թիվը պակասում է 3-ից, իսկ 156.2-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված կազմի անդամների թիվը՝ 5-ից:»:

Հոդված 6. Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 7-րդ կետը «հարցը» բառից հետո լրացնել «և քննում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումների դեմ բողոքները» բառերով.

2) 8-րդ կետը «հարցը» բառից հետո լրացնել «և քննում է դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումների դեմ բողոքները» բառերով:

Հոդված 7. Օրենքի 90-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «ինչպես նաև» բառերը, «հարցերը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի և դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումների դեմ բողոքները» բառերով.

2) լրացնել նոր՝ 3.1.-3.2.-րդ մասերով.

«3.1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի և դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումների դեմ բողոքի վերաբերյալ հարցերով Բարձրագույն դատական խորհրդի նիստերը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը կամ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամը:

3.2. Բարձրագույն դատական խորհրդի նախագահը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի այն կազմի նիստերը, որի կազմում ընդգրկվել է վիճակահանությամբ: Բարձրագույն դատական խորհրդի այն նիստերը, որի կազմում Բարձրագույն դատական խորհրդի նախագահը վիճակահանությամբ չի ընդգրկվել, հրավիրում և վարում է այդ կազմում ընդգրկված և Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով ընտրված անդամը:».

3) 4-րդ մասը «կամ» բառից հետո լրացնել «սույն օրենսգրքով նախատեսված դեպքում՝ նիստը վարելու իրավասություն ունեցող անդամի, ինչպես նաև խորհրդի» բառերով:

Հոդված 8. Օրենքի 91-րդ հոդվածի 1-ին մասը «նախագահը» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքում նաև նիստը հրավիրելու և վարելու իրավասություն ունեցող անդամը,» բառերով:

Հոդված 9. Օրենքի 92-րդ հոդվածի 2-րդ մասը «մասնակցում է խորհրդի» բառերից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում խորհրդի համապատասխան կազմի» բառերով:

Հոդված 10. Օրենքի 93-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «փոխարինող» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքում նաև նիստը վարելու իրավասություն ունեցող» բառերով.

2) 4-րդ մասի «կամ նրա» բառերը փոխարինել «, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքում նաև նիստը վարելու իրավասություն ունեցող խորհրդի անդամի կամ նրանց» բառերով:

Հոդված 11. Օրենքի 94-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասից հանել «Դատավորին և» բառերը, իսկ «ինչպես նաև» բառերից հետո հանել «դատավորի և» բառերը.

2) լրացնել նոր՝ 11-րդ մասով.

«11. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ հարցերը, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցերի մասին որոշումների դեմ բողոքները քննելիս Բարձրագույն դատական խորհրդի ակտերի և դրանց ընդունման կարգի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածով սահմանված կանոնները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:»:

Հոդված 12. Օրենքի 113-րդ հոդվածի 7-րդ մասի և 125-րդ հոդվածի 5-րդ մասի «օրենսգրքով» բառը փոխարինել «օրենսգրքի 157-րդ հոդվածով» բառերով:

Հոդված 13. Օրենքի 141-րդ հոդվածը լրացնել նոր՝ 1.1- 1.5.-րդ մասերով.

«1.1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության համար Բարձրագույն դատական խորհրդում ձևավորվում է Բարձրագույն դատական խորհրդի չորս անդամ ընդգրկող կազմ:

1.2. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելիս և որոշումներ կայացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անունից հանդես է գալիս սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմը՝ գործելով որպես Բարձրագույն դատական խորհուրդ:

1.3. Յուրաքանչյուր կարգապահական վարույթով ձևավորվում է սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված առանձին կազմ:

1.4. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմում պետք է ընդգրկվեն Բարձրագույն դատական խորհրդի՝ Ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված երկուական անդամներ:

1.5. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմերը ձևավորվում են վիճակահանությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով:»:

Հոդված 14. Օրենքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի «եռօրյա ժամկետում» բառերը փոխարինել «երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Հոդված 15. Օրենքի 146-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հաղորդման մեջ նշվում են՝

1) հաղորդումը ներկայացնող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, նրա հասցեն, իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա անունից հաղորդում ներկայացնող անձի անունը, ազգանունը և պաշտոնը, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի դեպքում՝ լրիվ անվանումը և պաշտոնատար անձի անունը, ազգանունը և պաշտոնը,

2) հաղորդման ներկայացման համար հիմք հանդիսացած դատական գործի համարը, տվյալ գործով դատավորի անունը, ազգանունը և պաշտոնը (կիրառելի լինելու դեպքում),

3) հիմնավորումներ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության վերաբերյալ,

4) հաղորդումը ներկայացնող անձի պահանջը,

5) հաղորդման ներկայացման ամսաթիվը և հաղորդումը ներկայացնող ֆիզիկական անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից հանդես եկող անձի ստորագրությունը, իսկ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի դեպքում՝ համապատասխան պաշտոնատար անձի ստորագրությունը:»:

2) լրացնել նոր 2.1-2.2-րդ մասերով.

«2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների խախտմամբ ներկայացված հաղորդումները վարույթ հարուցող մարմինը վերադարձնում է հաղորդում ներկայացրած անձին և առաջարկում է 15 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել այդ խախտումները: Հաղորդումը սույն մասով սահմանված կարգով վերադարձվում է նաև, եթե հաղորդումը կրկին ներկայացվելու դեպքում թույլ է տրվել սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների այլ նոր խախտում:

2.2. Վարույթ հարուցող մարմինը վարույթ հարուցելիս և իրականացնելիս կաշկանդված չէ հաղորդմամբ ներկայացված իրավական հիմքերով և հիմնավորումներով:».

3) 6-րդ մասը լրացնել նոր՝ 5-րդ կետով.

«5) սույն հոդվածի 2.1-ին մասով սահմանված ժամկետում չեն շտկվել սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների խախտումները:»:

Հոդված 16. Օրենքի 147-րդ հոդվածը լրացնել նոր՝ 11-րդ մասով.

«11. Վարույթ հարուցող մարմնի որոշմամբ միևնույն դատավորի վերաբերյալ, միևնույն խախտումների հիմքերով հարուցված երկու և ավելի կարգապահական վարույթները մինչև սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված որոշումը կայացնելը կարող են միավորվել մեկ վարույթում: Միավորման արդյունքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետը հաշվարկվում է ավելի վաղ հարուցված կարգապահական վարույթի հարուցման օրվանից: Վարույթները միավորելու մասին որոշումը հնգօրյա ժամկետում ուղարկվում է դատավորին, վարույթ հարուցող մյուս մարմին և հաղորդում ներկայացրած անձանց:»:

Հոդված 17. Օրենքի 153-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «հարցը» բառից հետո լրացնել «և կայացված որոշումների դեմ բողոքները» բառերով.

2) 1-ին մասում՝

ա) 1-ին կետը «հարցի» բառից հետո լրացնել «կամ բողոքի» բառերով.

բ) լրացնել նոր 6-րդ կետով.

«6) սույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկել իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումը:».

3) 2-րդ մասը «հարցը» բառից հետո լրացնել «և կայացված որոշումների դեմ բողոքները» բառերով.

4) 3-րդ մասը «հարցն» բառը փոխարինել «հարցը և կայացված որոշումների դեմ բողոքն» բառերով:

Հոդված 18. Օրենքի 154-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով.

«5. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ընդունվում է խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կազմի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Եթե քվեարկության արդյունքով որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով որոշում չի ընդունվում, ապա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված: Որոշումը կազմում և ստորագրում են սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմի այն անդամները, որոնք քվեարկել են միջնորդությունը մերժելու օգտին:»:

Հոդված 19. Օրենքի 155-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 1-ին կետը «անվանումը և» բառերից հետո լրացնել «դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության սույն օրենքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված» բառերով.

2) 4-րդ մասը «եզրահանգումը» բառից հետո լրացնել «, որոշման բողոքարկման ժամկետն ու այն մարմինը, որտեղ կարող է ներկայացվել բողոքը» բառերով.

3) 6-րդ մասը «հրապարակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում,» բառերը փոխարինել «հրապարակվելուց հետո անմիջապես հանձնվում է, իսկ դրա անհնարինության դեպքում հնգօրյա ժամկետում» բառերով.

4) 7-րդ մասը՝

ա) «հրապարակման պահից» բառերից հետո լրացնել «մեկ ամիս հետո» բառերով.

բ) երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշման դեմ բողոք ներկայացվելու և որոշումը չվերացվելու կամ չփոփոխվելու դեպքում այն ուժի մեջ է մտնում բողոքի մասին որոշումը հրապարակելու պահից:»:

Հոդված 20. Օրենքի 156.1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 156.1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման դեմ բողոք և բողոքի վերաբերյալ պատասխան ներկայացնելը

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ բողոք կարող է ներկայացվել միայն Բարձրագույն դատական խորհուրդ:

2. Բողոք կարող են ներկայացնել՝

1) դատավորը, որի նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում է կայացվել,

2) դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցած մարմինը:

3. Բողոք կարող է ներկայացվել որոշման հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

4. Բարձրագույն դատական խորհուրդը բողոքը ստանալուց հետո այն անմիջապես ուղարկում է մյուս կողմին, որը կարող է Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնել բողոքի պատասխան այն ստանալու պահից մեկ շաբաթվա ընթացքում: Պատասխան չներկայացվելու դեպքում հիմք է ընդունվում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքում կողմի ներկայացրած դիրքորոշումը:»:

Հոդված 21. Օրենքը 156.1.-րդ հոդվածից հետո լրացնել նոր 156.2-րդ և 156.3-րդ հոդվածներով.

«**Հոդված 156.2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման դեմ բողոքի քննությունը**

1. Բողոքի քննությունն իրականացնում է Բարձրագույն դատական խորհուրդը՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման կայացմանը չմասնակցած՝ առավելագույնը վեց անդամ ընդգրկող կազմով: Սույն մասով նախատեսված կազմում չեն ընդգրկվում Բարձրագույն դատական խորհրդի այն անդամները, որոնք ինքնաբացարկի կամ բացարկի հիմքով սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմում չեն մասնակցել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությանը:

2. Բողոքը քննելիս և որոշումներ կայացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անունից հանդես է գալիս սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կազմը՝ գործելով որպես Բարձրագույն դատական խորհուրդ:

3. Եթե Բարձրագույն դատական խորհրդի՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անդամների թիվը պակաս է 5-ից, ապա բողոքի քննությունը հետաձգվում է մինչև Բարձրագույն դատական խորհրդի կազմի՝ սույն մասով սահմանված նվազագույն թվի համալրումը, բայց ոչ ավելի, քան 3 ամիս ժամկետով: Եթե սույն մասով նախատեսված ժամկետում Բարձրագույն դատական խորհրդի կազմը չի համալրվում, ապա բողոքի քննությունն իրականացվում է անկախ սույն մասով նախատեսված նվազագույն թվից:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կազմի ձևավորման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:

5. Բարձրագույն դատական խորհրդում բողոքը քննվում է այն ստանալու պահից երկամսյա ժամկետում:

6. Բարձրագույն դատական խորհրդում բողոքի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սկզբունքների հիման վրա: Բողոքի քննության նկատմամբ կիրառվում են («mutatis mutandis») սույն օրենսգրքով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության համար սահմանված կանոնները, այնքանով, որքանով դրանք կիրառելի են, և եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ:

7. Բարձրագույն դատական խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

8. Բարձրագույն դատական խորհուրդն ընդունում է նոր ապացույց, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է տվյալ ապացույցը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ժամանակ ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

9. Բարձրագույն դատական խորհուրդն անդրադառնում է բողոքի հիմքին և դրա հիմնավորումներին, եթե բողոքարկողը տվյալ հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքում: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ բողոքարկողը զրկված է եղել այդ հարցի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:

10. Բարձրագույն դատական խորհրդում բողոքի քննության ժամանակ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությամբ հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և Բարձրագույն դատական խորհուրդը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս սխալ է թույլ տրվել: Նման դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված

չհամարելու կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությամբ հաստատած փաստը, եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի կամ բողոքի քննության ժամանակ հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

11. Եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ժամանակ հետազոտված ապացույցների հիման վրա չի հաստատվել որևէ փաստ, որը պետք է հաստատվեր, ապա Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ, եթե բողոքարկողը վիճարկում է հետազոտված ապացույցների հիման վրա այն չհաստատվելը, և եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի կամ բողոքի քննության ժամանակ հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է նման փաստ հաստատել:

12. Բարձրագույն դատական խորհրդում բողոքի քննությունը սկսվում է Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով ընտրված զեկուցող անդամի զեկուցումով, որը ներկայացնում է բողոքում և բողոքի պատասխանում նշված փաստարկները: Զեկուցումից հետո Բարձրագույն դատական խորհուրդը լսում է կողմերին:

13. Բարձրագույն դատական խորհրդի անդամները կարող են հարցեր ուղղել զեկուցողին, բողոքարկողին և մյուս կողմին:

Հոդված 156.3. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցի մասին որոշման դեմ բողոքի քննության արդյունքով կայացվող որոշումները

1. Բողոքի քննության արդյունքով Բարձրագույն դատական խորհուրդը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը՝

1) բողոքը բավարարելու, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը վերացնելու և

կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը մերժելու մասին.

2) բողոքը բավարարելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը մերժելու մասին որոշումը վերացնելու և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին.

3) բողոքը լրիվ կամ մասնակիորեն բավարարելու և որոշման պատճառաբանական մասը փոփոխելու մասին՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին.

4) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը փոփոխելու և կարգապահական տույժի այլ տեսակ կիրառելու մասին.

5) բողոքը մերժելու և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումն անփոփոխ թողնելու մասին:

2. Բողոքի քննության արդյունքներով կայացված Բարձրագույն դատական խորհրդի որոշումը բաղկացած է ներածական, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

3. Բողոքի քննության արդյունքներով կայացված որոշման ներածական մասում նշվում են՝

1) Բարձրագույն դատական խորհրդի անվանումը և բողոքը քննող կազմը.

2) Բարձրագույն դատական խորհրդում բողոքի քննության վայրը և ժամանակը.

3) բողոքը ներկայացրած կողմի անունը, ազգանունը և պաշտոնը.

4) մյուս կողմի անունը, ազգանունը և պաշտոնը.

5) գործին մասնակցող անձանց անունը, ազգանունը.

6) որոշումը կայացրած կազմը, որոշման կայացման տարին, ամիսը, ամսաթիվը:

4. Բողոքի քննության արդյունքներով կայացված որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշվում են՝

1) կայացված որոշման էության համառոտ շարադրանքը.

2) բողոքի հիմքերն ու հիմնավորումները, բողոքարկողի պահանջը, բողոքի պատասխանի առկայության դեպքում՝ պատասխանը ներկայացրած կողմի դիրքորոշումը և հիմնավորումները.

3) կողմերի բացատրությունները և դիրքորոշումը.

4) այն անձանց բացատրությունները, ցուցմունքները, որոնք հրավիրվել են նիստին.

5) այն ապացույցները կամ հանգամանքները, որոնց վրա հիմնված են Բարձրագույն դատական խորհրդի հետևությունները, ինչպես նաև այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները.

6) նորմատիվ իրավական ակտի այն նորմերը, որոնցով Բարձրագույն դատական խորհուրդը ղեկավարվել է որոշումն ընդունելիս.

7) եզրահանգում՝ բողոքի յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ:

5. Բողոքի քննության արդյունքներով Բարձրագույն դատական խորհրդի որոշման եզրափակիչ մասում նշվում է Բարձրագույն դատական խորհրդի եզրահանգումը:

6. Բողոքի քննության արդյունքով Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ընդունվում է խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ սույն օրենսգրքի 156.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կազմի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով: Եթե քվեարկության արդյունքով որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով որոշում չի ընդունվում, ապա ընդունված է համարվում այն որոշումը, որն առավել բարենպաստ է դատավորի համար, իսկ որոշումը կազմում և ստորագրում են սույն օրենսգրքի 156.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կազմի այն անդամները, որոնք քվեարկել են այդ որոշման օգտին:

7. Բողոքի քննության արդյունքով դատավորը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության կամ կարգապահական

պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը կարող է թողնվել անփոփոխ, եթե սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կազմում կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշմանը կողմ քվեարկած և 156.2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կազմում կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը անփոփոխ թողնելու վերաբերյալ որոշմանը կողմ քվեարկած անդամների ընդհանուր թիվը գերազանցում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը:

8. Բարձրագույն դատական խորհրդի՝ բողոքի քննության արդյունքով կայացված որոշումը կազմվում և դրա եզրափակիչ մասը հրապարակվում է Բարձրագույն դատական խորհրդի նիստում հարցի քննությունն ավարտված հայտարարելուց հետո՝ 15 օրվա ընթացքում:

9. Որոշումը հրապարակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, ուղարկվում է վարույթ հարուցող մարմիններ և դատավորին:

10. Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:»:

Հոդված 22. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 1-ին հոդվածը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Այն կազմակերպությունները, որոնք մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը իրենց անվանումներում օգտագործել են սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող սահմանափակումները, պարտավոր են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում իրենց անվանումները համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետում իրենց անվանումները սույն օրենքի պահանջներին չհամապատասխանեցրած կազմակերպությունները ենթակա են վարչական պատասխանատվության:

4. Սույն օրենքի 2-21-րդ հոդվածները ուժի մեջ են մտնում սույն օրենքի 13-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 141.1-ին հոդվածի 1.5-րդ մասի հիման վրա ընդունված Բարձրագույն դատական խորհրդի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահին:

5. Մինչև սույն օրենքի 2-21-րդ հոդվածների ուժի մեջ մտնելը հարուցված կարգապահական վարույթների, այդ թվում՝ ավարտված կարգապահական վարույթների, և այդ վարույթների արդյունքով կայացված որոշումների նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքի 2-21-րդ հոդվածների ուժի մեջ մտնելը գործող կարգավորումները:

6. Բարձրագույն դատական խորհուրդը սույն օրենքի 2-21-րդ հոդվածներից բխող որոշումներն ընդունում, այդ թվում՝ իր աշխատակարգը սույն օրենքին համապատասխանեցնում է սույն օրենքի 2-21-րդ հոդվածների ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Կարգավորման անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակումը բխում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցերի քննության արդյունքում կայացվող որոշումների բողոքարկման հնարավորության նախատեսման, այդ ինստիտուտների կիրառության արդյունքում ծագած մի շարք գործնական խնդիրների լուծման, ինչպես նաև Կազմակերպությունների կողմից իրենց անվանումներում «դատավոր» բառի կամ Հայաստանի Հանրապետության դատարանների անվանումների, դրանց հոլովաձևերի կամ դրանք ներառող բառակապակցությունների կամ օտարալեզու իմաստային թարգմանությունների օգտագործումը սահմանափակելու անհրաժեշտությունից:

Առկա իրավիճակը

ա. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում (այսուհետ՝ Դատական օրենսգիրք) սահմանված չէ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցերի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ նաև՝ ԲԴԽ) որոշումների բողոքարկման իրավական հնարավորություն: Մինչդեռ, միջազգային փաստաթղթերում բազմիցս կարևորվել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և նրա լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշումները բողոքարկելու իրավական հնարավորություն նախատեսելու անհրաժեշտությունը:Բացի այդ, գործող Դատական օրենսգրքով չեն սահմանվում

նաև կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդմանը ներկայացվող պահանջները և հարուցված կարգապահական վարույթների քննության արդյունավետությունը ապահովող այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են փոխկապակցված միջնորդությունները միավորելու վերաբերյալ կարգավորումները:

Այսպես.

1. ***«Դատական իշխանության անկախության մասին» ՄԱԿ-ի սկզբունքների*** 20-րդ կետը նախատեսում է, որ կարգապահական, կասեցման կամ պաշտոնանկության ընթացակարգերի շրջանակներում ընդունվող որոշումները պետք է ենթակա լինեն անկախ վերանայման[1]:

2. ***ԵԽ Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)12 հանձնարարականի*** 69-րդ պարագրաֆում նշվում է, որ կարգապահական վարույթը «պետք է անցկացվի անկախ մարմնի կամ դատարանի կողմից, արդար դատաքննության բոլոր երաշխիքների պահպանմամբ, և դատավորին իրավունք տրվի վիճարկելու որոշումը և պատասխանատվության միջոցը»[2]:

3. ***«Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի միջազգային ստանդարտները և պատշաճ պրակտիկայի մասին» ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի*** նշումներում կարևորվում է, որ կարգապահական ընթացակարգերը պետք է նաև նախատեսեն առաջին ատյանի կարգապահական մարմնի (լինի դա իշխանություն, տրիբունալ կամ դատարան) կայացրած որոշումը դատարանում բողոքարկելու հնարավորություն[3]:

4. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման մեխանիզմների նախատեսման անհրաժեշտությունը կարևորվել է նաև ***«Ժողովրդավարության՝ իրավունքի***

---

[1] the UN Basic Principles on the Independence of the Judiciary (endorsed by the UN General Assembly resolutions 40/32 of 29 November 1985 and 40/146 of 13 December 1985).

[2] Recommendation CM/Rec(2010)12 of the Committee of Ministers to member states on judges: independence, efficiency and responsibilities, կետ 69, https://rm.coe.int/cmrec-2010-12-on-independence-efficiency-responsibilites-of-judges/16809f007d.

[3] OSCE/ODIHR Note on International Standards and Good Practices of Disciplinary Proceedings against Judges, էջ 19, https://www.osce.org/odihr/410387.

միջոցով» Վենետիկի հնաձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) բազմաթիվ կարծիքներում և զեկույցներում.

1) *«Դատավորների նշանակումների մասին» զեկույցում* Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ կողմ է դատական խորհուրդների կամ կարգապահական դատարանների՝ կարգապահական վարույթ իրականացնելու լիազորություններին[4]: Վենետիկի հանձնաժողովն նաև նշել է, որ «պետք է հասանելի լինի անկախ դատարանում կարգապահական միջոցները բողոքարկելու հնարավորություն[5]»:

2) *«Դատական համակարգի անկախության մասին» զեկույցի* եզրակացություններում հանձնաժողովը պնդել է, որ պետք է գոյություն ունենա կարգապահական մարմինների որոշումները դատարանում բողոքարկելու հնարավորություն[6]:

3) Տարբեր երկրների դատական համակարգերին վերաբերող օրենքների նախագծերի վերաբերյալ կարծիքներում ևս Վենետիկի հանձնաժողովը արձանագրել է, որ պետք է հասանելի լինի դատավորների նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցների բողոքարկման հնարավորություն[7]:

Վենետիկի հանձնաժողովը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման իրավական հնարավորություն նախատեսելու

---

[4] CDL-AD(2007)028-e, Judicial Appointments - Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007), § 49.

[5] CDL-AD(2007)028-e, Judicial Appointments - Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007), §25; Opinion on the draft Law on the High Judicial and Prosecutorial Council of Bosnia and Herzegovina, §110.

[6] CDL-AD(2010)004-e, Report on the Independence of the Judicial System Part I: The Independence of Judges adopted by the Venice Commission at its 82nd Plenary Session (Venice, 12-13 March 2010), § 43.

[7] CDL-AD(2018)029, Opinion on the provisions on the Prosecutorial Council in the draft Organic Law on the Prosecutor's Office and on the provisions on the High Council of Justice in the existing Organic Law on General Courts of Georgia, §53; CDL-AD(2016)009, Final Opinion on the revised draft constitutional amendments on the Judiciary (15 January 2016) of Albania, §62; CDL-AD(2014)008, Opinion on the draft Law on the High Judicial and Prosecutorial Council of Bosnia and Herzegovina, §110: CDL(1995)074rev, Opinion on the Albanian law on the organisation of the judiciary? (chapter VI of the Transitional Constitution of Albania), էջ 4; CDL-AD(2017)019, Opinion on the Draft Judicial Code of Armenia, §§144, 145.

անհրաժեշտությանը անդրադարձել է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության վերաբերյալ եզրակացությունում[8]:

Այնուհետև, այս խնդրի կարևորությանը հանձնաժողովը բազմիցս անդրադարձել է հենց Դատական օրենսգրքի, ինչպես նաև դրանում փոփոխություններ նախատեսող նախագծերի վերաբերյալ կարծիքներում: Մասնավորապես.

1. Դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ 2017 թվականի կարծիքում[9] Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ դատական օրենսգրքի նախագիծը չի նախատեսում ԲԴԽ-ի կարգապահական վարույթներով որոշումները բողոքարկելու իրավունք: Օրենսգրքի նախագծի համաձայն՝ համապատասխան դատավորին հասանելի միակ իրավական պաշտպանության միջոցը Սահմանադրական դատարան սահմանադրական բողոք ներկայացնելն է: Ըստ այդմ Սահմանադրական դատարանն իրավունք ունի քննել «կարգապահական տույժ նշանակելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ [դատավորի] նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը»: Վենետիկի հանձնաժողովը, սակայն, նշել է, որ Սահմանադրական դատարան նման բողոքը ներկայացնելը չի կարող դիտարկվել որպես վերաքննիչ վերանայում: Մասնավորապես, հանձնաժողովը նշել է, որ առաջին հերթին, այս բողոքն ընդգրկում է շատ նեղ շրջանակ. այսպիսի շատ դեպքերում «սահմանադրականության» խնդիր չի առաջանում, և, այնուամենայնիվ, կարգապահական պատասխանատվության միջոցները կարող են անարդար կիրառվել: Երկրորդ, նման բողոքի սահմանադրական հիմքերը պարզ չեն: Հայաստանի Սահմանադրությունը Սահմանադրական դատարանի այլ իրավասությունների շարքում չի թվարկում Բարձագույն դատական խորհրդի որոշումները Սահմանադրական դատարան բողոքարկելու իրավասությունը: Բացի

[8] CDL-AD(2015)037, First Opinion on the Draft Amendments to the Constitution (Chapters 1 to 7 and 10) of the Republic of Armenia, § 153

[9] CDL-AD(2017)019-e, Armenia - Opinion on the Draft Judicial Code, adopted by the Venice Commission at its 112th Plenary Session (Venice, 6-7 October 2017), https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2017)019-e.

այդ, Վենետիկի հանձնաժողովը ավելի վաղ նշել էր. «կարգապահական գործերով [դատական խորհրդի] որոշումների բողոքարկման քննությունը Սահմանադրական դատարանի հիմնական գործառույթների մեջ չի մտնում»[10]: Ամեն դեպքում Սահմանադրական դատարանը այդքան էլ հարմար չէ նման գործերը քննելու համար: Այսպիսով, Վենետիկի հանձնաժողովը եզրահանգել է, որ տուժող դատավորի Սահմանադրական բողոքը չի կարող որակվել որպես կարգապահական տույժի նկատմամբ ներկայացված պատշաճ բողոք: Վենետիկի հնաձնաժողովը շեշտել է, որ ***բողոքարկման համակարգի բացակայությունը մտահոգիչ է:***

Վենետիկի հանձնաժողովը կարևորել է նաև, որ դատավորի լիազորությունների դադարեցումը պետք է կարգավորվի կարգապահական վարույթի կանոններով:

2. Դատական օրենսգրքում և մի շարք այլ օրենքներում փոփոխությունների վերաբերյալ 2019 թվականի համատեղ կարծիքում[11] Վենետիկի հանձնաժողովը նշվել է, որ Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգապահական ոլորտում Բարձրագույն դատական խորհուրդը «գործում է որպես դատարան»: Դատական օրենսգիրքը զարգացնում է այս սահմանադրական դրույթը. այն ապահովում է կարգապահական վարույթների մրցակցային բնույթը և երաշխավորում դատավորի դատավարական իրավունքները: Բացի այդ, Բարձրագույն դատական խորհրդի անդամներն օգտվում են անկախության որոշ հիմնարար երաշխիքներից (նրանց նշանակման, պաշտոնավարության կանոնները և այլն): Այսպիսով, ըստ Վենետիկի հնաձնաժողովի, Բարձրագույն դատական խորհրդի դերը կարգապահական վարույթներում, ընդհանուր առմամբ, համապատասխանում է CM/Rec(2010)12 հանձնարարականին, որում նշվում է, որ կարգապահական վարույթը «պետք է անցկացվի անկախ մարմնի կամ դատարանի կողմից՝ արդար

[10] CDL-AD(2014)026, Opinion on the seven amendments to the Constitution of "the former Yugoslav Republic of Macedonia" concerning, in particular, the judicial Council, the competence of the Constitutional Court and special financial zones, § 93.

[11] CDL-AD(2019)024-e, Armenia - Armenia - Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI, on the amendments to the Judicial Code and some other Laws, adopted by the Venice Commission at its 120th Plenary Session (Venice, 11-12 October 2021), https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2019)024-e.

դատաքննության բոլոր երաշխիքների պահպանմամբ [...]»[12], և Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի N 21 կարծիքին, որի համաձայն. «կարգապահական վարույթը միշտ պետք է իրականացվի հիմնականում դատական մարմինների կողմից (ինչպիսին է կարգապահական հանձնաժողովը կամ դատարանը կամ բարձրագույն դատական խորհրդի ճյուղը)»[13]: Հանձնաժողովը, սակայն, կրկին շեշտադրել է, որ «***մի հարց, սակայն, մնում է չլուծված. այն է՝ կարգապահական գործերով ԲԴԽ-ի որոշումները դատական կարգով բողոքարկելու հնարավորության բացակայությունը***»[14]:

Անդրադառնալով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ԲԴԽ-ի որոշման բողոքարկման մասին Դատական օրենսգրքի 156.1-ին հոդվածում նախատեսվող կարգավորումներին՝ հանձնաժողովը նշել է, որ առաջարկվող փոփոխությունները պարունակում են նոր դրույթ Բարձրագույն դատական խորհրդի որոշումների «բողոքարկման» վերաբերյալ (նոր հոդված՝ 156.1): Սակայն, ըստ Վենետիկի հանձնաժողովի, այս մեխանիզմը դժվար թե կարելի է բնութագրել որպես պատշաճ «բողոքարկում»: Այն ավելի շուտ հիշեցնում է նույն մարմնի (ԲԴԽ) կողմից նախկինում քննված և լուծված գործի վերաբացում՝ նոր երևան եկած հանգամանքների հիման վրա[15]: «Բողոքարկում» հասկացությունը ենթադրում է մեկ այլ մարմնի կողմից նույն (այլ ոչ թե նոր ի հայտ եկած) փաստերի և ապացույցների հիման վրա կայացված որոշման օրինականության և

[12] Recommendation CM/Rec(2010)12 of the Committee of Ministers to member states on judges: independence, efficiency and responsibilities, կետ 69, https://rm.coe.int/cmrec-2010-12-on-independence-efficiency-responsibilites-of-judges/16809f007d.

[13] CCJE, Opinion n° 21 (2018) on preventing corruption among judges, կետ 30, https://rm.coe.int/ccje-opinions-compilation-1-23-en-final/1680a40c2e.

[14] CDL-AD(2019)024-e, Armenia - Armenia - Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI, on the amendments to the Judicial Code and some other Laws, adopted by the Venice Commission at its 120th Plenary Session (Venice, 11-12 October 2021), § 31, https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2019)024-e.

[15] «Վերաքննիչ բողոքարկումը» հնարավոր է այն դեպքերում, երբ ի հայտ են եկել էական ապացույցներ կամ հանգամանքներ, որոնք նախկինում դատարան չեն ներկայացվել կողմից անկախ հանգամանքներով և որոնք կարող են ողջամտորեն ազդել վճռի վրա»:

արժանահավատության ստուգում: Այսպիսով, առաջարկվող մեխանիզմը չի կարող փոխարինել «բողոքարկում» բառին բուն իմաստով:

Վենետիկի հանձնաժողովի կարծիքում կան մի քանի պատճառներ՝ ***լրջորեն դիտարկելու Բարձրագույն դատական խորհրդի որոշման դեմ բողոք ներկայացնելու հնարավորությունը:*** Առաջին հերթին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ հոդվածն անուղղակի երաշխավորում է դատարանի մատչելիության իրավունքը: Եթե դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցը շոշափում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները, ապա դատավորին պետք է տրամադրվի նման մատչելիություն: Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ հարցն այն է՝ արդյո՞ք Հայաստանի Բարձրագույն դատական խորհուրդը որակվում է որպես «դատարան»: Ramos Nunes de Carvalho e Sá v. Portugal գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) Մեծ պալատը եզրակացրել է, որ քանի որ Պորտուգալիայի Բարձրագույն դատական խորհուրդը վարչական մարմին է, ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի ապահովումը պահանջում է «լիարժեք իրավազորություն ունեցող դատական մարմնի կողմից հետագա հսկողություն» (§ 132), այսինքն՝ ամբողջական բողոքարկում: Այլ կերպ ասած, Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ եթե ՄԻԵԴ-ը գտնի, որ Բարրագույն դատական խորհուրդը չի բավարարում դատական մարմնի պահանջները (ի հեճուկս Սահմանադրության 175 (2) հոդվածի), ապա դատարան բողոք ներկայացնելու անհրաժեշտությունը կբխի Եվրոպական կոնվենցիայի պահանջներից:

Երկրորդ, նույնիսկ եթե ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի հետ կապված որևէ հարց չի առաջանում, Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ կարգապահական հարցերով դատարան դիմելու անհրաժեշտությունը բխում է մի շարք եվրոպական փաստաթղթերից, ինչպիսին է, օրինակ, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 10 եզրակացությունը[16]: Եզրակացության 39-րդ էջում նշվում է, որ դատական խորհրդի «որոշ որոշումներ», ինչպիսիք են «որոշումները,

[16] Համաեվրոպական մարմին է, որը բաղկացած է ազգային դատական մարմինների ներկայացուցիչներից:

որոնք վերաբերում են […] դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելուն և լիազորությունների դադարեցմանը» պետք է լինեն «դատական վերանայման օբյեկտ»: Նախարարների կոմիտեի ստանդարտներն ավելի ճկուն են. CM(2010)12 հանձնարարականի 69-րդ էջում նշվում է, որ կարգապահական վարույթը «պետք է անցկացվի անկախ մարմնի կամ դատարանի կողմից՝ արդար դատաքննության բոլոր երաշխիքների պահպանմամբ և դատավորին հնարավորություն ընձեռի վիճարկելու որոշումը ու սանկցիան»: Այսպիսով, Նախարարների կոմիտեի հանձնարարականը ի կատար կածվի, եթե սանկցիան վիճարկելու հնարավորություն նախատեսվի. բայց, միևնույն ժամանակ, այն չի մասնավորեցնում, որ բողոքարկման մարմինը պետք է լինի դատարան: Ամեն դեպքում, Նախարարների կոմիտեն պահանջում է այդ հարցերում իրավասության երկրորդ աստիճան, որը բացակայում է հայկական իրավահամակարգում:

Եվ վերջապես, Վենետիկի հանձնաժողովը կրկին նշել է, որ ինքը՝ հանձնաժողովը, ևս տարբեր դեպքերում բազմիցս առաջարկել է ունենալ կարգապահական հարցերի վերաբերյալ դատական խորհուրդների որոշումները բողոքարկելու հնարավորություն[17], թեև ընդունել է, որ այդ բողոքը կարող է սահմանափակ լինել: Այսպես, Հյուսիսային Մակեդոնիայի վերաբերյալ կարծիքում Վենետիկի հանձնաժողովը առաջարկել է. «Բողոքարկման խորհուրդը պետք է հնարավորություն ունենա բեկանել Դատական խորհրդի որոշումները միայն դատավարական և նյութական իրավունքի կոպիտ սխալների առկայության դեպքում»[18], իսկ Բոսնիայի և Հերցեգովինայի վերաբերյալ եզրակացության մեջ նշել է, որ Բարձրագույն դատական և դատախազական խորհրդի որոշումների դատական բողոքարկումը պահանջվում է «առնվազն այն դեպքերի համար, երբ խիստ պատիժ է

[17] CDL-AD(2015)037-e, First Opinion on the Draft Amendments to the Constitution (Chapters 1 to 7 and 10) of the Republic of Armenia endorsed by the Venice Commission at its 104th Plenary Session (Venice, 23-24 October 2015), § 153, https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2015)037-e.

[18] CDL-AD(2019)008-e, North Macedonia - Opinion on the Draft Law on the Judicial Council, adopted by the Venice Commission at its 118th Plenary Session (Venice, 15-16 March 2019), § 35 https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2019)008-e.

նշանակվել»[19]: 2017 թվականի հոկտեմբերի եզրակացության մեջ Վենետիկի հանձնաժողովն ընդգծել է, որ «վերաքննիչ մարմինը իր վերանայումն իրականացնելիս պետք է [Դատական խորհրդի] նկատմամբ հարգանքով գործի՝ փաստական հանգամանքների հաստատման և համապատասխան վարքագծի կանոնների մեկնաբանման կապակցությամբ[20]»:

Դատական օրենսգրքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման հնարավորության նախատեսման հարցը բարձրացվել է *նաև* ***Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) զեկույցներում***: Մասնավորապես, ԳՐԵԿՈ-ի «*Գնահատման չորրորդ փուլ. կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» Հայաստանի վերաբերյալ դեռևս 2015 թվականի գնահատման զեկույցում* նշվել է. «ԳՐԵԿՈ գնահատման խումբը մտավախություն ունի, որ հաջողություն չունեցած թեկնածուները հնարավորություն չունեն վիճարկելու աշխատանքի ընդունման և առաջխաղացման ընթացակարգերի վերաբերյալ Արդարադատության խորհրդի կողմից ընդունված որոշումները: ... ԳՐԵԿՈ-ն խորհուրդ է տալիս բարեփոխել դատավորների հավաքագրման, առաջխաղացման և ազատման ընթացակարգերը, այդ թվում՝ ... երաշխավորելով այդ ընթացակարգերի շրջանակներում ցանկացած որոշման՝ դատարանում բողոքարկելու հնարավորություն»[21]: «... ԳՐԵԿՈ գնահատման խումբը ցանկանում է ընդգծել, թե ***որքան կարևոր է, որ դատավորներն իրավունք ունենան բողոքարկել կարգապահական որոշումները դատարանում***, ի հակադրություն ներկա իրավիճակի, երբ գործի է դրվում միայն Արդարադատության

[19]CDL-AD(2014)008-e, Opinion on the draft Law on the High Judicial and Prosecutorial Council of Bosnia and Herzegovina adopted by the Venice Commission at its 98th Plenary Session (Venice, 21-22 March 2014), § 110, https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2014)008-e.

[20] CDL-AD(2017)019-e, Armenia - Opinion on the Draft Judicial Code, adopted by the Venice Commission at its 112th Plenary Session (Venice, 6-7 October 2017), § 151, https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2017)019-e.

[21] Greco Eval IV Rep (2015) 1E, էջ 34:

խորհուրդը, որը պետք է «գործի որպես դատարան», և դատավորներին հնարավորություն չի տրվում վիճարկել Արդարադատության խորհրդի որոշումները»[22]:

Այնուհետև, ԳՐԵԿՈ-ի *«Գնահատման չորրորդ փուլ. կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» Հայաստանի վերաբերյալ 2021 թվականի համապատասխանության միջանկյալ զեկույցում* նշվել է. «... ԳՐԵԿՈ-ն հանգում է այն եզրակացության, որ դատավորների աշխատանքի ընդունման և առաջխաղացման վերաբերյալ որոշումների բողոքարկման պատշաճ մեխանիզմներ ստեղծվել են, մինչդեռ սա չի վերաբերում աշխատանքից ազատումներին»[23]: Նշված զեկույցում ԳՐԵԿՈ-ն վերահաստատել է իր մոտեցումը, որ դեռևս հնարավոր չէ դատարանում բողոքարկել կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշումը (այդ թվում՝ ազատման) և եզրակացրել է, որ ***այս մասով իր հանձնարարականը մնում է մասամբ չկատարված***»[24]:

<u>Միջազգային հեղինակավոր կառույցների վերը ներկայացված դիրքորոշումների համատեքստում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցերի վերաբերյալ ԲԴԽ-ի որոշումների բողոքարկման հնարավորության նախատեսման անհրաժեշտությունը կասկած չի հարուցում:</u>

Միևնույն ժամանակ, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումների բողոքարկման վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի զեկույցների և կարծիքների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման վերաբերյալ հետևյալ հիմնական չափանիշները, որոնք ուղենշային կարող են լինել ԲԴԽ-ի որոշումների բողոքարկումը կարգավորող համապատասխան կարգավորումները նախատեսելիս.

---

[22] Greco Eval IV Rep (2015) 1E, էջ 42: Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights of the Council of Europe on the "Draft Law Amending and Supplementing the Judicial Code of Armenia (Evaluation System for Judges)", §§ 84 and 128.
[23] GrecoRC4(2021)15, § 38:
[24] GrecoRC4(2021)15, §§ 39, 43:

- բողոք ներկայացնելը պետք է թույլատրվի շահագրգիռ կողմերին՝ դիմողին և համապատասխան դատավորին[25].

- պետք է ապահովվեն կարգապահական վարույթ հարուցելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու և բողոքների վերաբերյալ որոշումներ կայացնելու գործառույթների հստակ տարանջատում, օրինակ, կարգապահական վարույթի հարուցած անձը չպետք է մասնակցի հետագա որոշումների կայացմանը[26].

- շատ կարևոր է, որ վերանայող դատական մարմնի կազմը սահմանվի օրենքով[27].

- կարող է քննարկման առարկա դառնալ Բարձրագույն դատական խորհրդի շրջանակներում կարգապահական հարցերով հատուկ վերաքննիչ կոլեգիայի ստեղծումը[28].

- բողոքարկման ատյանը պետք է որակվի որպես «դատարան», այսինքն՝ ապահովի բավարար դատավարական երաշխիքներ և ինստիտուցիոնալ առումով անկախ լինի[29]: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում

[25] CDL-AD(2014)006, Joint opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe, and of the OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR) on the draft law on disciplinary liability of judges of the Republic of Moldova, §§81, 84:

[26] CDL-AD(2017)019, Opinion on the Draft Judicial Code of Armenia, §§150-151; CDL-AD(2019)008, Opinion on the Draft Law on the Judicial Council of North Macedonia, §§34-35; CDL-AD(2014)006, Joint opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe, and of the OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR) on the draft law on disciplinary liability of judges of the Republic of Moldova, §§82, 83:

[27] CDL-AD(2015)042, Opinion on the Laws on the Disciplinary Liability and Evaluation of Judges of "The Former Yugoslav Republic of Macedonia", §96.

[28] CDL-AD(2017)019-e, Armenia - Opinion on the Draft Judicial Code, adopted by the Venice Commission at its 112th Plenary Session (Venice, 6-7 October 2017), §150.

[29] CDL-AD(2017)019, Opinion on the Draft Judicial Code of Armenia, §§150-151; CDL-AD(2019)008, Opinion on the Draft Law on the Judicial Council of North Macedonia, §§34-35; CDL-AD(2014)006, Joint opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe, and of the OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR) on the draft law on disciplinary liability of judges of the Republic of Moldova, §§82, 83:

շարադրված երաշխիքները պետք է ամրագրվեն առանձին հոդվածով և կիրառվեն կարգապահական վարույթի բոլոր փուլերում[30].

- կարգապահական վարույթի դեմ բերված ցանկացած բողոք պետք է խոչընդոտի որոշման վերջնական դառնալուն այնքան ժամանակ, քանի դեռ բողոքը չի քննվել[31]:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման վերաբերյալ վերը ներկայացված հիմնական չափանիշները, բնականաբար, կիրառելի են լինելու նաև դատավորի լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշումների դեմ բողոքներր քննության նկատմամբ՝ հաշվի առնելով նաև Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումն առ այն, որ կարգապահական վարույթին վերաբերող կանոնները պետք լիովին կիրառելի լինեն դատավորի լիզորությունների դադարեցման նկատմամբ:

Կարգապահական վարույթով կայացվող ԲԴԽ-ի որոշումների բողոքարկման կարգավորման համատեքստում կարևոր է նաև այս հարցի վերաբերյալ եվրոպական պետություններում առկա հիմնական մոտեցումների ուսումնասիրությունը: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթով կայացվող որոշումների բողոքարկման վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եվրոպական երկրների ճնշող մեծամասնությունում նախատեսված է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթներով կայացվող որոշումների բողոքարկման հնարավորություն: Մասնավորապես, բողոքարկման հնարավորություն նախատեսված

[30] CDL-AD(2014)032, Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate of Human Rights and the Rule of Law (DGI) of the Council of Europe, on the draft Law on making changes to the Law on disciplinary Liability and disciplinary Proceedings of Judges of General Courts of Georgia, §50 :

[31] CDL-AD(2014)006, Joint opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe, and of the OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR) on the draft law on disciplinary liability of judges of the Republic of Moldova, §§81, 84:

է Ավստրիայում[32], Գերմանիայում[33], Ֆրանսիայում[34], Վրաստանում[35], Լատվիայում[36], Լիտվայում[37], Էստոնիայում[38], Բուլղարիայում[39], Խորվաթիայում[40], Ուկրաինայում[41], Մոլդովայում[42], Նորվեգիայում և այլն: Միևնույն ժամանակ, օրինակ, ***Չեխիայում և Նիդերլանդներում***[43] դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումները կայացնում է Գերագույն դատարանը, և այս երկրներում նման որոշումների բողոքարկման իրավական հնարավարություն նախատեսված չէ:

---

[32] Standards for disciplinary proceedings and liablilty of judges, https://www.encj.eu/images/stories/pdf/GA/Hague/encj_report_minimum_standards_v_adopted_ga_june_2015.pdf

[33] Standards for disciplinary proceedings and liablilty of judges, p. 39, https://www.encj.eu/images/stories/pdf/GA/Hague/encj_report_minimum_standards_v_adopted_ga_june_2015.pdf.

[34] Standards for disciplinary proceedings and liablilty of judges, p. 39, https://www.encj.eu/images/stories/pdf/GA/Hague/encj_report_minimum_standards_v_adopted_ga_june_2015.pdf.

[35] «Ընդհանուր դատարանների մասին» օրգանական օրենք, https://matsne.gov.ge/en/document/view/90676?publication=34.

[36] «Դատական կարգապահական պատասխանատվության մասին» օրենք, https://likumi.lv/doc.php?id=57677.

[37] «Դատարանների մասին» օրենք, https://www.teismai.lt/en/courts/legal-acts/655, «Պատվի դատարանի կարգավորումները հաստատելու մասին» Դատական խորհրդի բանաձևը, https://www.teismai.lt/en/self-governance-of-courts/judicial-court-of-honour/about-court/664.

[38] Դատարանների ակտ, https://www.riigiteataja.ee/en/eli/514022014001/consolide.

[39] «Դատական համակարգի մասին» ակտ https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/workinggroup4/2012-August-27-29/Responses_NVs_2012/20120419_Bulgaria_English_8.pdf.

[40] «Ազգային/Պետական Դատական խորհրդի մասին» Խորվաթիայի Հանրապետության օրենք, http://www.vsrh.hr/CustomPages/Static/HRV/Files/Legislation__Law-State-Judiciary-Council.pdf, «Սահմանադրական դատարանի մասին» Խորվաթիայի Հանրապետության սահմանադրական օրենք, https://www.sabor.hr/en/constitutional-act-constitutional-court-republic-croatia.

[41] «Արդարադատության բարձրագույն խորհրդի մասին», «Դատարանակազմության և դատավորների կարգավիճակի մասին» օրենքներ, https://kodeksy.com.ua/ka/zakony_ukraini.htm.

[42] «Դատավորների կարգապահական պատասխանատվության մասին» https://www.legis.md/cautare/getResults?doc_id=130335&lang=ru. «Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի մասին», https://www.legis.md/cautare/getResults?doc_id=130334&lang=ru Մոլդովայի Հանրապետության օրենքներ.

[43] Standards for disciplinary proceedings and liablilty of judges, p. 39, https://www.encj.eu/images/stories/pdf/GA/Hague/encj_report_minimum_standards_v_adopted_ga_june_2015.pdf.

Համեմատական փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս առաձնացնել բողոքարկման համակարգի հիմնական բաղադրիչների վերաբերյալ առկա հետևյալ հիմնական մոտեցումները.

1. Կարգապահական պատասխանատվության ենթարկող և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության արդյունքում կայացվող որոշման դեմ բողոքը քննող մարմինը:

Ավստրիայում յուրաքանչյուր որ ունի կարգապահական բողոք ներկայացնելու իրավունք: Կարգապահական բողոքները քննվում են «Ավստրիական դատավորների և հանրային դատախազների մասին» ակտով սահմանված մարմինների կողմից: Այսպես, 4 վերաքննիչ դատարաններից (Վիեննա, Գրաց, Լինց, Իննսբրուկ) յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես մյուս վերաքննիչ դատարանի ոլորտի դատավորների համար ***Կարգապահական դատարան (կոլեգիա)***:

Ավստրիական ակտով նախատեսվում է, որ Վերաքննիչ դատարաններն ունեն աշխատակազմի կոլեգիաներ, որոնք կազմված են 5 անդամներից (Վերաքննիչ դատարանի նախագահը և նախագահի տեղակալը և Վերաքննիչ դատարանի երեք դատավորները): Վերաքննիչ դատարանի աշխատակազմի այդ կոլեգիան պետք է կազմի Կարգապահական կոլեգիա՝ հինգ տարի ժամկետով, որը բաղկացած է Վերաքննիչ դատարանի ավագ դատավորներից և դատավորներից: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի դատավորներից պետք է նշանակվի կարգապահական քննիչ: Երբ գործում է որպես Կարգապահական դատարան, Վերաքննիչ դատարանը նիստեր է գումարում երեք ավագ դատավորներից կազմված կարգապահական կոլեգիայում, որոնցից մեկը գլխավորում է կոլեգիան: Նախնական քննությունը պետք է անցկացվի կարգապահական քննիչի կողմից, որը չի մտնում կարգապահական կոլեգիայի կազմի մեջ: Կարգապահական վարույթի ընթացքում ***Կարգապահական դատախազը*** պաշտպանում է Հանրային ծառայության շահերը: Կարգապահական դատախազը պարտավոր է հաշվետու լինի պետական ծառայության շահերը ներկայացնող բարձրագույն վարչական մարմին հանդիսացող Արդարադատության նախարարությանը:

Կարգապահական կոլեգիան կարող է տալ նախազգուշացում, սահմանել տուգանք (մինչև 5 ամսվա աշխատավարձի չափով), կարող է որոշում կայացնել դատավորին այլ պաշտոնի փոխադրելու մասին՝ առանց նրան տեղափոխման ծախսերը վճարելու, վերջապես, կարող է որոշում կայացնել դատավորին պաշտոնից ազատելու մասին:

Լեհաստանում «Ընդհանուր դատարանների համակարգի մասին» օրենքի համաձայն՝ կարգապահական հանձնակատարը լիազորված դատախազ է կարգապահական դատարանում Վերաքննիչ դատարանի դատավորների, ինչպես նաև շրջանային դատարանների նախագահների և նախագահների տեղակալների գործերով. մնացած բոլոր դեպքերում լիազոր դատախազը կարգապահական հանձնակատարի տեղակալն է: Կարգապահական հանձնակատարն ընտրվում է Լեհաստանի դատական իշխանության ազգային խորհրդի կողմից վերաքննիչ դատավորների գլխավոր ասամբլեայի կողմից առաջադրված թեկնածուներից: Կարգապահական հանձնակատարը գործում է Լեհաստանի դատական իշխանության ազգային խորհրդում: Կարգապահական հանձնակատարի լիազորությունների ժամկետը չորս տարի է: Վերաքննիչ դատարանների կոլեգիաներն ընտրում են կարգապահական հանձնակատարի տեղակալներ յուրաքանչյուր բողոքի համար, իսկ շրջանային դատարանների կոլեգիաներն ընտրում են տեղակալներ տվյալ դատարանի դատավորների թվից յուրաքանչյուր շրջանի համար: Կարգապահական հանձնակատարի տեղակալների լիազորությունների ժամկետը երկու տարի է:

Կարգապահական հանձնակատարը վարույթը սկսում է Արդարադատության նախարարի, Վերաքննիչ դատարանի կամ շրջանային դատարանի նախագահի և վերաքննիչ դատարանի կամ շրջանային դատարանի կոլեգիայի համապատասխան պահանջով, Դատական իշխանության ազգային խորհրդի պահանջով կամ իր նախաձեռնությամբ՝ ոչ իրավաչափ վարքագծի հատկանիշները հաստատելու համար անհրաժեշտ հանգամանքները բացահայտելով և դատավորից բացատրություններ ստանալով, բացառությամբ այն դեպքերի, երբ նման բացատրությունների տրամադրումը հնարավոր չէ:

Նշված քննությունից հետո կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի առկայության դեպքում ***կարգապահական հանձնակատարը*** հարուցում է կարգապահական վարույթ և համապատասխան դատավորին ներկայացնում է գրավոր մեղադրանքներ: Միևնույն ժամանակ, կարգապահական հանձնակատարը խնդրում է Գերագույն դատարանի առաջին նախագահին նշել իրավասու կարգապահական դատարանը՝ որպես ստորին ատյան գործը քննելու համար: Դատարանը պետք է նշվի յոթ օրվա ընթացքում: Կարգապահական հանձնակատարը միշտ դատավոր է և կարգապահական դատախազի դեր է խաղում կարգապահական ընթացակարգի ժամանակ:

Դատավորների նկատմամբ կարգապահական գործերը քննելու համար ստեղծվում են հետևյալ կարգապահական դատարանները՝

1) ստորադաս ատյանների դատավորիների համար՝ վերաքննիչ դատարաններում,

2) վերադաս ատյանների դատավորների համար՝ Գերագույն դատարանում:

Գերագույն դատարանի դատավորների կարգապահական գործերը քննվում են միայն Գերագույն դատարանի կողմից:

Վերաքննիչ դատարանների բոլոր դատավորները (բացառությամբ յուրաքանչյուր վերաքննիչ դատարանի նախագահի և յուրաքանչյուր վերաքննիչ դատարանի կարգապահական հանձնակատարի), ինչպես նաև Գերագույն դատարանի բոլոր դատավորները (բացառությամբ այդ դատարանի նախագահների և կարգապահական հանձնակատարի) կարգապահական դատավորներ են, որոնք որոշումներ են կայացնում կարգապահական ընթացակարգերով:

Կարգապահական դատարանի կազմը որոշվում է տվյալ դատարանի դատավորների թվից վիճակահանությամբ՝ պայմանով, սակայն, որ կարգապահական դատարանի դատավորներից առնվազն մեկը պետք է մշտապես քննած լինի քրեական գործեր: Դատավորը, որը մշտապես քննել է քրեական գործեր և ունի ամենաերկար ստաժը, հանդիսանում է կարգապահական դատարանի նախագահող դատավոր:

Կարգապահական տույժերն են՝

1) նախազգուշացումը,

2) նկատողությունը,

3) զբաղեցրած պաշտոնից ազատումը,

4) ծառայության այլ վայր փոխադրելը:

Կարգապահական դատարանում կարգապահական վարույթին մասնակցում են միայն մեղադրվող դատավորը և կարգապահական հանձնակատարը:

Կարգապահական դատարանի որոշման դեմ բողոքը աննվում է վերադաս ատյանի կարգապահական դատարանի կողմից: Վերադաս ատյանի կարգապահական դատարանը ***Գերագույն դատարանն*** է, որը կարգապահական գործերը քննում է վերաքննության կարգով:

Բելգիայում կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեցող մարմինը, որպես կանոն, ***այն մարմնի ղեկավարն*** է, որի անդամ է հանդիսանում համապատասխան դատավորը: Այսպես, օրինակ՝ առաջին ատյանի դատարանի դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցում առաջին ատյանի դատարանի նախագահը: Իսկ դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցում է ***վերադաս դատարանի նախագահը***: Օրինակ, եթե կարգապահական վարույթը պետք է հարուցվի առաջին ատյանի դատարանի նախագահի նկատմամբ, ապա որպես հարուցող մարմին հադնես է գալիս Վերաքննիչ դատարանի նախագահը: Կարգապահական խախտման փաստերը հայտնաբերվում են կամ կարգապահական վարույթ հարուցած մարմնի կողմից, կամ դրանք նրան ներկայացնում են համապատասխան դատարանի դատախազը կամ քաղաքացիները կամ Արդարադատության բարձրագույն խորհուրդը: Հարկ է ընդգծել, որ Արդարադատության նախարարը բարձրագույն դատական խորհրդի նման կարող է քաղաքացիներից ստացած բողոքները ուղարկել վարույթ հարուցող մարմին: Կարգապահական վարույթի քննության կազմակերպման համար կարգապահական վարույթ հարուցած մարմինը նշանակում է մագիստրոսի, ով երեքամսյա ժամկետում քննում է բողոքի հիման վրա հարուցված կարգապահական վարույթը:

Թեթև կարգապահական տույժերը նշանակում է հենց կարգապահական վարույթ հարուցած անձը: ***Ավելի խիստ կարգապահական տույժերը կարող են կիրառվել միայն կարգապահական դատարանի որոշմամբ:*** Կարգապահական դատարանի դատավորները նշանակվում են առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների ընդհանուր ժողովի կողմից: Կարգապահական պալատի իրավասու պալատը սովորաբար ներառում է կարգապահական դատարանի երկու դատավորների և մեկ գնահատող, ով պետք է լինի նույն ատյանի դատավոր: Գնահատողներն ընտրվում են դատարանների ընդահուր ժողովի կողմից և նշանակվում դատարանների նախագահների կողմից: Բելգիայի Թագավորությունում օրենքի հիման վրա գործում են դատավորների նկատմամբ հարուցվող կարգապահական գործեր քննող Նամուրի և Գենթի դատարանները, որոնց որոշումները հնարավոր է ***բողոքարկել վերաքննության կարգով՝ Բրյուսելի դատարանում:***

Վրաստանում դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը լուծելու համար կարգապահական գործի նախնական քննությունն ու ուսումնասիրությունն իրականացնում է *Վրաստանի Արդարադատության բարձրագույն խորհրդի Անկախ տեսուչը* (Անկախ տեսուչ): Անկախ տեսուչն իր եզրակացություններն ու կարծքիները ներկայացնում է Վրաստանի Արդարադատության բարձրագույն խորհրդին: Կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի ուսումնասիրության արդյունքում *Արդարադատության բարձրագույն խորհուրդը* որոշում է կայացնում դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին: Կարգապահական գործի քննության արդյունքում Արդարադատության բարձրագույն խորհուրդը կարող է որոշում կայացնել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ վարույթն ավարտելու մասին: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշմամբ Արդարադատության բարձրագույն խորհուրդը նշանակում է նաև իր ներկայացուցչին, ով Վրաստանի Ընդհանուր դատարանների դատավորների կարգապահական խորհրդում ներկայացնում է կարգապահական

մեղադրանքը: Վրաստանի ընդհանուր դատարանների դատավորների նկատմամբ կարգապահական գործը քննում է ***Վրաստանի ընդհանուր դատարանների կարգապահական խորհուրդը*** (կազմված է 5 անդամներից, որից 3-ը՝ Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված դատավոր անդամներն են, իսկ 2-ը՝ Խորհրդարանի կողմից ընտրված ոչ դատավոր անդամները): Կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման դեմ բողոքը քննում է ***Վրաստանի Գերագույն դատարանի Կարգապահական պալատը***:

Լատվիայում շրջանային (քաղաքային) դատարանների, մարզային դատարանների և Գերագույն դատարանի դատավորների թույլ տված կարգապահական խախտումների վերաբերյալ գործերը քննում է ***Դատական կարգապահական կոմիտեն***, որը դատական ինքնակառավարման մարմին է: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ կարող են հարուցել Գերագույն դատարանի նախագահը, Արդարադատության նախարարը, մարզային դատարանի նախագահը, շրջանային դատարանի նախագահը, Դատական կարգապահական հանձնաժողովը: Դատական կարգապահական կոմիտեի որոշումը կարող է բողոքարկվել ***Կարգապահական դատարան***, որը բողոքը քննում է ոչ պակաս, քան 3 դատավոր կազմով:

Լիտվայում կարգապահական հայցը ներկայացվում է ***Պատվի դատարան***, որը դատական ինքնակառավարման մարմին է և քննում է դատավորների կարգապահական գործերը և դատավորի պատվի պաշտպանության վերաբերյալ դատավորների միջնորդությունները: Դատավորի նկատմամբ կարգապահական հայցը ներկայացնում է *Դատական էթիկայի և կարգապահական հանձնաժողովը*, որը նույնպես դատական ինքնակառավարման մարմին է: Այն կազմված է 7 անդամից, որից 2-ին նշանակում է նախագահը, 1-ին՝ Սեյմի խոսնակը, 4-ին՝ Դատական խորհուրդը: Պատվի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել ***Գերագույն դատարան*** դրա ընդունումից հետո՝ տասն օրվա ընթացքում: Բողքը քննվում է դատական կոլեգիայի կողմից՝ Գերագույն դատարանի երեք դատավորների կազմով: Պատվի դատարանի որոշումը բողոքարկելու դեպքում կարգապահական տույժն ուժի

մեջ է մտնում Գերագույն դատարանի որոշման կայացման օրվանից և գործում է մեկ տարվա ընթացքում:

Էստոնիայում Կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն *Գերագույն դատարանի նախագահը*՝ բոլոր դատավորների նկատմամբ, *արդարադատության կանցլերը*՝ բոլոր դատավորների նկատմամբ, *շրջանային դատարանի նախագահը*՝ իր տարածքային իրավասության առաջին ատյանի դատարանների դատավորների նկատմամբ, *դատարանի նախագահը*՝ նույն դատարանի դատավորների նակտմամբ, *en banc (ամբողջ կազմով) Գերագույն դատարանը* Գերագույն դատարանի նախագահի նկատմամբ: Կարգապահական գործերը քննում են ***Գերագույն դատարանի Կարգապահական պալատը***, որի կազմում ընդգրկված են Գերագույն դատարանի հինգ դատավորներ, շրջանային դատարանի հինգ դատավորներ և առաջին ատյանի դատարանների հինգ դատավորներ: Դատավորի կարգապահական գործը քննելու համար ***Կարգապահական պալատի նախագահը ձևավորում է հինգ անդամից բաղկացած կոլեգիա***, որը ներառում է Գերագույն դատարանի՝ Կարգապահական պալատի երեք անդամներին, շրջանային դատարանի մեկ դատավոր և առաջին ատյանի դատարանի մեկ դատավոր: Կարգապահական պալատի հինգ անդամների կոլեգիան կարգապահական գործը քննում է դատական նիստում: Կարգապահական պալատի որոշամ դեմ բողոքները քննում է en banc Գերագույն դատարանը: Կարգապահական պալատի որոշումը, որը բողոքարկվել է ***en banc Գերագույն դատարան***, ուժի մեջ է մտնում en banc Գերագույն դատարանի որոշումը կայացնելուց հետո:

Բուլղարիայում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություն կարող են ներկայացնել համապատասխան վարչական *ղեկավարը, Բարձրագույն դատական խորհրդի տեսչությունը, Բարձրագույն դատական խորհրդի անդամների ոչ պակաս քան 1/5-ը, Արդարադատության նախարարությունը*: Կարգապահական տույժերը կիրառում է ***Բարձրագույն դատական խորհուրդը***: Բարձրագույն դատական խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել Բարձրագույն վարչական դատարան: Բողոքը չի կասեցնում

որոշման կատարումը, եթե Բարձրագույն վարչական դատարանը այլ որոշում չի կայացնում: Բողոքը քննվում է Բարձրագույն վարչական դատարանի *կոլեգիայի կողմից՝ երեք անձի կազմով՝* այն դատարան ընդունվելու պահից մեկ ամսվա ընթացքում: Բարձրագույն վարչական դատարանի 3 դատավորի կազմով կայացված որոշումը *իրավունքի հարցերով կարող է բողոքարկվել Բարձրագույն վարչական դատարանի կոլեգիայում՝ 5 հոգանոց կազմով*: 5 անդամից բաղկացած կոլեգիան բողոքը քննում է իրավունքի հարցերով:

Ուկրաինայում կարգապահական վարույթը սկսվում է դատավորի կարգապահական զանցանքի վերաբերյալ դիմումով (կարգապահական դիմում): Դատավորի կարգապահական զանցանքի վերաբերյալ դիմում ներկայացնելու իրավունք ունի ցանկացած անձ: Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներն իրականացնում են ***Արդարադատության բարձրագույն խորհրդի կարգապահական պալատները*** (Կարգապահական պալատ): Կարգապահական պալատները ստեղծում է Արդարադատության բարձրագույն խորհուրդը՝ որը կազմված է 21 անդամներից: Յուրաքանչյուր Կարգապահական պալատի կազմում պետք է ընդգրկված լինի արդարադատության բարձրագույն խորհրդի առնվազն չորս անդամ: Կարգապահական պալատների քանակը և յուրաքանչյուր պալատում անդամների քանակը սահմանվում է Արդարադատության բարձրագույն խորհրդի որոշմամբ: Արդարադատության բարձրագույն խորհուրդը պետք է ապահովի, որ յուրաքանչյուր Կարգապահական պալատի անդամների առնվազն կեսը կամ եթե դա հնարավոր չէ, ապա յուրաքանչյուր կարգապահական պալատի անդամների զգալի մասը լինեն դատավորներ կամ պաշտոնաթող դատավորներ: Անհրաժեշտության դեպքում Արդարադատության բարձրագույն խորհուրդը կարող է որոշում ընդունել մեկ կարգապահական պալատի անդամին այլ պալատի աշխատանքներում ներգրավելու մասին կամ այդ որոշումն ընդունելու լիազորությունները պատվիրակել Արդարադատության բարձրագույն խորհրդի նախագահին: Կարգապահական պալատի որոշման դեմ բողոքը կարող է ներկայացվել ***բացառապես Արդարադատության բարձրագույն խորհուրդ***: Ընդ որում, բողոքարկման ընթացքում

Արդարադատության բարձրագույն խորհրդի այն անդամները, որոնք հանդիսացել են վիճարկվող որոշումն ընդունած Կարգապահական պալատի անդամներ, չեն մասնակցում բողոքի քննությանը՝ բացառությամբ Կարգապահական պալատի այն անդամի, ով եղել է կարգապահական գործով զեկուցող: Վերջինս իրավունք ունի ելույթ ունենալու Արդարադատության բարձրագույն խորհրդի նիստում և ներկայացնել Կարգապահական պալատի որոշման մասին զեկույցը:

Մոլդովայում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերով զբաղվում է ***Կարգապահական կոկեգիան***, որը անկախ մարմին է և իրականացում է դատավորների նկատմամբ հարուցված կարգապահական գործերի քննությունը և դրանց վերաբերյալ ընդունում որոշում: Մոլդովայի Հանրապետությունում դատավորների ենթադրյալ կարգապահական խախտումների հանգամանքների վերաբերյալ դիմում կարող են ներկայացնել՝

ա) այն անձը, որի իրավունքները խախտվել են դատավորի կատարած արարքի արդյունքում,

բ) Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի անդամները,

գ) Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը.

դ) Դատական տեսչությունը.

ե) Արդարադատության նախարարությունը:

Կարգապահական գործը Կարգապահական կոլեգիան քննում է ամբողջ կազմով: Կարգապահական կոլեգիայի որոշումները կարող են ***բողոքարկվել Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդ***՝ կոլեգիայի միջոցով: Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի ընդունած որոշումները կարող են բողոքարկվել Քիշնևի Վերաքննիչ պալատ (Վերաքննիչ պալատը բարձրագույն դատական ատյանն է, որն ապահովում է օրենքների միատեսակ կիրառությունը բոլոր դատական ատյանների համար): Վերաքննիչ պալատում Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի որոշման դեմ բերված բողոքի քննությունը իրականացվում է 5 դատավորի կազմով:

Մոլդովայում բողոքարկման ենթակա է նաև տեսուչի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու դիմումը մերժելու մասին որոշումը, որը կարող է բողոքարկվել Կարգապահական կոլեգիա: Բողոքի քննության համար Կարգապահական կոլեգիայի որոշմամբ ստեղծվում են Կարգապահական կոլեգիայի կազմեր՝ կազմված 3 անդամից, որոնցից 2-ը դատավորներ են, իսկ 1-ը՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ:

Խորվաթիայում դատավորների նկատմամբ կարգապահական ընթացակարգերն իրականացնում և կարգապահական խախտման փաստը հաստատում է ***Պետական դատական խորհուրդը***: Կարգապահական գործի քննությունն իրականացնում է ***Խորհրդի երեք անդամներից բաղկացած Կարգապահական կոմիտեն***, եթե միայն որոշում չի կայացվել, որ քննությունը պետք է իրականացնի ողջ խորհուրդը: Կոմիտեի անդամներին նշանակում է Խորհրդի նախագահը:

Կարգապահական ընթացակարգերը կարող են նախաձեռնել հետևյալ սուբյեկտների պահանջով.

- դատավորի նկատմամբ՝ դատարանի նախագահի, վերադաս դատարանի նախագահի, Գերագույն դատարանի նախագահի և արդարադատության նախարարի,

- դատավորի նախագահի նկատմամբ՝ վերադաս դատարանի նախագահի, Գերագույն դատարանի նախագահի և արդարադատության նախարարի,

- Գերագույն դատարանի նախագահի նկատմամբ՝ Գերագույն դատարանի գլխավոր ասամբլեայի կամ Խորվաթիայի Հանրապետության կառավարության:

Կարգապահական պատասխանատվության մասին որոշումը կարող է բողոքարկվել Խորվաթիայի Հանրապետության ***Սահմանադրական դատարան***: Ընդ որում, բողոքի վերաբերյալ որոշումն ընդունվում է Սահմանադրական դատարանի Խորհրդի ձայների մեծամասնությամբ՝ վեց դատավորի կազմով: Եթե Սահմանադրական դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է, ապա, վերացնում է վիճարկվող որոշումը, և գործը վերադարձնում է Ազգային դատական խորհուրդ՝

քննությունը վերսկսելու նպատակով: Հատկանշական է, որ գործը Ազգային դատական խորհուրդ ետ վերադարձնելուց հետո Ազգային դատական խորհուրդը պետք է այլ որոշում կայացնի և պետք է առաջնորդվի դիմողի սահմանադրական իրավունքների խախտման վերաբերյալ Սահմանադրական դատարանի իրավական եզրակացություններով:

2. Բողոքարկման ենթակա որոշումները:

Ավստրիայում, Վրաստանում, Լատվիայում, Լիտվայում, Լեհաստանում, Բելգիայում, Բուլղարիայում, Ուկրաինայում և Մոլդովայում բողոքարկման ենթակա են կարգապահական տույժ նշանակելու մասին և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները:

Էստոնիայում և **Խորվաթիայում** բողոքարկման ենթակա է միայն կարգապահական տույժ կիրառելու մասին որոշումը:

3. Բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտները:

Վրաստանում բողոք ներկայացնելու իրավունք ունեն կարգապահական վարույթի կողմերը՝ դատավորը և Արդարադատության բարձրագույն խորհուրդը:

Ավստրիայում, եթե կարգապահական քննությունը շարունակվում է, և Կարգապահական կոլեգիան վերջնական որոշում է կայացնում գործի վերաբերյալ, որոշումը կարող է Գերագույն դատարան բողոքարկվել կարգապահական պատասխանողի և Կարգապահական դատախազի կողմից:

Լատվիայում բողոք ներկայացնելու իրավունք ունի միայն կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորը:

Լիտվայում բողոքարկման իրավունք ունեն դատավորը և կարգապահական հայց ներկայացրած մարմինը, այսինքն՝ Դատական էթիկայի և կարգապահական հանձնաժողովը:

Լեհաստանում մեղադրվող դատավորը, կարգապահական հանձնակատարը, ինչպես նաև Ազգային դատական խորհուրդը և Արդարադատության նախարարը կարող են բողոքարկել ստորադաս ատյաններում կայացված կարգապահական

դատարանի որոշումները, ինչպես նաև ընթացակարգն ամփոփող որոշումներն ու կարգադրությունները:

Էստոնիայում բողոք ներկայացնելու իրավունք ունի միայն կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորը:

Բելգիայում կարգապահական մարմնի կիրառած թեթև կարգապահական տույժերը կարող է բողոքարկել համապատասխան դատավորը: Կարգապահական խիստ տույժ նշանակելու դեպքում կարգապահական դատարանի որոշումների դեմ կարող են բողոք ներկայացնել համապատասխան դատավորը և կարգապահական վարույթ հարուցող մարմինը:

Բուլղարիայում բողոք ներկայացնելու իրավունք ունեն կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորի կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առաջարկություն ներկայացրած կողմը, այսինքն՝ համապատասխան վարչական ղեկավարը, Բարձրագույն դատական խորհրդի տեսչությունը, Բարձրագույն դատական խորհրդի անդամների ոչ պակաս քան 1/5-ը, Արդարադատության նախարարությունը:

Ուկրաինայում կարգապահական վարույթի արդյունքում Կարգապահական պալատի կայացրած որոշումը Արդարադատության բարձրագույն խորհուրդ բողոքարկելու իրավունք ունի այն դատավորը, որի նկատմամբ կայացվել է համապատասխան որոշումը: Կարգապահական դիմում ներկայացրած անձը ևս իրավունք ունի բողոքարկելու կարգապահական վարույթի արդյունքում Կարգապահական պալատի կայացրած որոշումը Արդարադատության բարձրագույն խորհուրդ՝ նման բողոքարկման համար Կարգապահական պալատի թույլտվության առկայության դեպքում:

Մոլդովայում բողոքարկման իրավունք ունեն դատավորը և Կարգապահական կոլեգիա դատավորի ենթադրյալ կարգապահական խախտումների հանգամանքների վերաբերյալ կարգապահական դիմումը ներկայացրած կողմը, որը կարող է լինել այն անձը, որի իրավունքները խախտվել են դատավորի կատարած արարքի արդյունքում, Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի անդամները,դատավորների

գործունեության գնահատման հանձնաժողովը, դատական տեսչությունը, Արդարադատության նախարարությունը:

Խորվաթիայում բողոքարկման իրավունք ունի միայն դատավորը:

4. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշման դեմ բողոքների քննության առանձնահատկությունները:

Վրաստանում օրենքը կարգավորում է բողոքի քննության սկզբունքները: Կարգապահական պալատը բողոքը քննում է կոլեգիալ: Կարգապահական կոլեգիան կարգապահական գործը քննում է անկողմնակալ և օբյեկտիվորեն՝ կողմերի մրցակցության և հավասարության սկզբունքի հիման վրա: Կարգապահական պալատի նիստը դռնփակ է, իսկ բողոքի քննության հետ կապված տեղեկատվությունը գաղտնի է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Կարգապահական պալատի անդամը և կարգապահական մեղադրանք առաջադրած անձը պարտավոր են պահպանել տեղեկատվության գաղտնիությունը: Կարգապահական պալատը Կարգապահական խորհրդի որոշումը վերանայում է բողոքի շրջանակներում՝ ինչպես փաստի, այնպես էլ իրավունքի տեսանկյունից, ինչպես նաև սահմանված պատժի օրինականության տեսանկյունից: Իրավական ընթացակարգերի խախտումը կարող է հիմք ծառայել որոշումը բեկանելու համար միայն այն դեպքում, եթե այն հանգեցրել է գործով ըստ էության սխալ որոշման կայացման: Կարգապահական պալատը կարող է վերաորակել դատավորի արարքը որպես կարգապահական զանցանք և դատավորին մեղավոր ճանաչել նաև օրենքին համապատասխան այլ կարգապահական զանցանք կատարելու մեջ, եթե կարգապահական մեղադրանքի փաստացի հանգամանքները դա ներառում են: Կարգապահական պալատը որոշում է ընդունում Կարգապահական խորհրդի որոշումը վերացնելու մասին, եթե Կարգապահական խորհուրդն ապօրինի է արդարացրել դատավորին կամ ապօրինաբար դադարեցրել է նրա դեմ հարուցված կարգապահական գործը կամ ապօրինաբար նրան կարգապահական պատասխանատվության է ենթարկել և կիրառել կարգապահական տույժ:

Ուկրաինայում սահմանված է ուղղակի կարգավորում առ այն, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Կարգապահական պալատի որոշման դեմ բողոքի քննությունն իրականացվում է օրենքով կարգապահական գործի քննության համար սահմանված կարգով: Կարգապահական պալատի՝ կարգապահական տույժ նշանակելու մասին որոշման բողոքարկումը իր հերթին կասեցնում է կարգապահական տույժ նշանակելու մասին որոշման գործողությունը: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Կարգապահական պալատը որպես տույժ կիրառել է դատավորի լիազորությունները դադարեցնելու պատասխանատվության միջոցը և այդ որոշումը բողոքարկվել է: Նման դեպքերում դատավորը հեռացվում է արդարադատություն իրականացնելուց այնքան ժամանակ, մինչև Արդարադատության բարձրագույն խորհուրդը կարգապահական գործով որոշումը վերցնելու մասին որոշում չի կայացնում: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Կարգապահական պալատի որոշման դեմ բողոքի քննությունն իրականացվում է օրենքով կարգապահական գործի քննության համար սահմանված կարգով:

Մոլդովայում, եթե Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդը բավարարում է բողոքը և կայացնում նոր որոշում, կարգապահական գործի քննության կարգի և որոշումների բովանդակության վերաբերյալ Կարգապահական կոլեգիային վերաբերող կարգավորումները կիրառելի են դառնում Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի համար:

5. Բողոքի քննության արդյունքում կայացվող որոշումները:

Վրաստանում Կարգապահական պալատը լիազորված է ընդունել Կարգապահական խորհրդի որոշումն անփոփոխ թողնելու, Կարգապահական խորհրդի որոշումը փոփոխելու, Կարգապահական խորհրդի որոշումը վերացնելու և նոր որոշման ընդունելու, Կարգապահական խորհրդի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին որոշումներ:

Էստոնիայում en banc Գերագույն դատարանը կարող է մերժել Կարգապահական պալատի որոշումը փոփոխելը, փոփոխել այն և դատավորին

պատասխանատվության ենթարկել մեղմ կարգապահական զանցանք կատարելու համար՝ մեղմացնելով նշանակված կարգապահական տույժը, հրաժարվել էական փոփոխություններ կատարելուց և մեղմացնել կարգապահական տույժը, բեկանել որոշումը և արդարացնել դատավորին:

Ուկրաինայում բողոքարկման արդյունքում Արդարադատության բարձրագույն խորհուրդը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը՝

1) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Կարգապահական պալատի որոշումն ամբողջությամբ վերացնելու և կարգապահական վարույթը դադարեցնելու մասին,

2) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Կարգապահական պալատի որոշումը մասնակի վերացնելու և նոր որոշում ընդունելու մասին,

3) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը մերժելու մասին Կարգապահական պալատի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու և նոր որոշում ընդունելու մասին,

4) Կարգապահական պալատի որոշումը փոփոխելու և կարգապահական տույժի այլ տեսակ նշանակելու մասին,

5) առանց որևէ փոփոխության Կարգապահական պալատի որոշումը հաստատելու մասին:

Մոլդովայում բողոքների քննության արդյունքում Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդն անփոփոխ է թողնում Կարգապահական կոլեգիայի որոշումը կամ բավարարում է բողոքը և կայացնում նոր որոշում:

Այսպիսով համեմատական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

1. ուսումնասիրված երկրներից 9-ում (Վրաստան, Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Բուլղարիա, Ավստրիա, Լեհաստան) բողոքը ներկայացվում է բարձրագույն դատական ատյան, 1-ում՝ վերաքննիչ դատարան (Բելգիա), 1-ում՝ Սահմանադրական դատարան (Խորվաթիա), 2-ում՝ Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդ (Ուկրաինա, Մոլդովա), ընդ որում՝

1) երկրներից 9-ում (Վրաստան, Լատվիա, Լիտվա, Բուլղարիա, Մոլդովա, Խորվաթիա, Ավստրիա, Բելգիա, Լեհաստան) կարգապահական պատասխանատվություն կիրառող և բողոքը քննող սուբյեկտները ***տարբեր են***, իսկ 2-ում (Էստոնիա, Ուկրաինա) դրանք ***նույն մարմնի*** համապատասխանաբար որոշակի թիվն ընդգրկող և ամբողջ կազմերն են.

2. ուսումնասիրված երկրներից 8-ում (Վրաստան, Լիտվա, Բուլղարիա, Ուկրաինա, Մոլդովա, Ավստրիա, Բելգիա, Լեհաստան) բողոքարկման իրավունք ունեն դատավորը և վարույթը հարուցած կամ վարույթ հարուցելու առաջարկություն ներկայացրած սուբյեկտը, իսկ 3-ում (Լատվիա, Էստոնիա, Խորվաթիա)՝ միայն դատավորը.

3. այն երկրներում, որոնցում բողոքարկման իրավունք ունի միայն դատարանը, բողոքարկման ենթակա է կարգապահական տույժ կիրառելու մասին որոշումը, իսկ այն երկրներում, որոնցում նաև՝ հարուցող սուբյեկտը, բողոքարկման ենթակա է նաև կարգապահական վարույթը կարճելու մասին որոշումը.

4. ուսումնասիրված երկրներից 2-ում (Վրաստան, Ուկրաինա) ուղղակիորեն նախատեսված է, որ բողոքի քննությունն իրականացվում է կարգապահական վարույթի քննության համար սահմանված կանոնների պահպանմամբ.

5. բողոքի քննության արդյունքում կայացվում են հետևյալ որոշումները՝ 1) որոշումն անփոփոխ թողնելու, փոփոխելու, վերացնելու, 2) նոր որոշում ընդունելու, 3) գործը նոր քննության ուղարկելու մասին.

6. ուսումնասիրված երկրներից 5-ում (Վրաստան, Լատվիա, Լիտվա, Խորվաթիա, Էստոնիա) բողոքի քննության արդյունքում կայացված որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ, իսկ 3-ում (Բուլղարիա, Ուկրաինա, Մոլդովա) ենթակա է բողոքարկման:

Պետությունը	Կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտը	Կարգապահական պատասխանատվության ենթարկող մարմինը	Մարմինը, որին ներկայացվում է բողոքը	Բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտները	Բողոքարկման ենթակա որոշումները	Բողոքի քննության արդյունքում կայացվող որոշումները	Բողոքի քննության առաձնահակտությունները
1.Վրաստան	Արդարադատության բարձրագույն խորհուրդը	Ընդհանուր դատարանների կարգապահական խորհուրդը	Գերագույն դատարանի կարգապահական պալատը	1. Արդարադատության բարձրագույն խորհուրդը 2. Դատավորը	Կարգապահական վարույթի դադարեցնելու, դատավորին՝ կարգապահական զանցանք կատարելու մեջ մեղավոր ճանաչելու և նրա նկատմամբ կարգապահական պատասխանատվություն և տույժի ենթարկելու, դատավորին կարգապահական զանցանք կատարելու	Կարգապահական խորհրդի որոշումն անփոփոխ թողնելու, փոփոխելու, վերացնելու և նոր որոշում ընդունելու, որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու	Քննության ծավալը: Կարգապահական պալատը Կարգապահական խորհրդի որոշումը վերանայում է բողոքի շրջանակներում՝ ինչպես փաստի, այնպես էլ իրավունքի տեսանկյունից, ինչպես նաև սահմանված պատժի օրինականության տեսանկյունից: Իրավական ընթացակարգերի խախտմամբ Կարգապահական խորհրդի

					մեջ մեղավոր ճանաչելու, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորին մասնավոր հանձնարարական նամակով դիմելու, դատավորի արդարացնելու մասին որոշումները[44]:	մասին:	կողմից գործի քննությունը կարող է հիմք ծառայել որոշումը բեկանելու համար միայն այն դեպքում, եթե այն հանգեցրել է գործով ըստ էության սխալ որոշման ընդունման: Կարգապահական պալատը բողոքը քննում է Կարգապահական խորհրդի կողմից գործի քննության համար նախատեսված սկզբունքներին համապատասխան: Կարգապահական պալատի որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:
2.Լատվիա	1. Գերագույն դատարանի	Դատական կարգապահական	Կարգապահական	Դատավորը	Կարգապահական տույժ նշանակելու մասին,	Որոշումն անփոփոխ	Կարգապահական դատարանը բողոքը քննում

[44] Կարգապահական վարույթը կասեցնելու մասին որոշումը բողոքարկման ենթակա չէ:

	նահագահը. 2. Արդարադատության նախարարը. 3. Դատարանների նախագահները. 4. Դատական կարգապահական հանձնաժողովը	կան կոմիտե	դատարան		դատավորին պաշտոնից ազատելու համար առաջարկություն ներկայացնել մասին որոշումները[45]:	թողնելու և բողոքը մերժելու մասին, որոշումը բեկանելու և կարգապահական վարույթը դադարեցնելու մասին, որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, եթե դա չի վատթարացնում բողոք ներկայացնողի վիճակը:	է ոչ պակաս, քան 3 դատավոր կազմով: Բողոքը քննվում է դռնբաց, եթե Կարգապահական դատարանն այլ որոշում չի կայացրել: Գործի քննությանը մասնակցում են բողոք ներկայացնողը և կարգապահական վարույթ հարուցողը կամ նրա ներկայացուցիչը: Կարգապահական դատարանը բողոքի վերաբերյալ որոշում է ընդունում ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Կարգապահական դատարանի նախագահի

[45] Քրեական գործ հարուցելու մասին որոշում ընդունելու համար Կարգապահական գործի նյութերը Գլխավոր դատախազություն ուղարկելու մասին, կարգապահական վարույթն ավարտելու մասին որոշումները բողոքարկման ենթակա չեն:

							ձայնը որոշիչ է: Կարգապահական դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում ծանուցման պահից և ենթակա չէ բողոքարկման:
3.Լիտվա	Դատական էթիկայի և կարգապահական հանձնաժողովը [46]	Պատվի դատարան	Գերագույն դատարան	1. Դատական էթիկայի և կարգապահական հանձնաժողովը . 2. Դատավորը	Կարգապահական հայցը մերժելու մասին, կարգապահական հայցը քննելուց հրաժարվելու մասին, կարգապահական տույժ կիրառելու մասին, Հանրապետության Նախագահին կամ Սեյմին օրենքով սահմանված կարգով դատավորին պաշտոնանկ անելու	Սովորական բողոքների քննության արդյունքում կայացվող որոշումները:	Բողոքը քննվում է դատական կոլեգիայի կողմից՝ Գերագույն դատարանի երեք դատավորների կազմով: Պատվի դատարանի որոշումը բողոքարկելու դեպքում կարգապահական տույժն ուժի մեջ է մտնում Գերագույն դատարանի որոշման կայացման օրվանից և գործում է մեկ տարվա ընթացքում:

[46] Կարգապահական հայցը հարուցվում է Պատվի դատարանում:

					առաջարկ ներկայացնելու մասին, դատավորի նկատմամբ իմպիչմենտի գործընթաց հարուցելու մասին դիմումով Սեյմին դիմելու համար Հանրապետության Նախագահին առաջարկ ներկայացնելու մասին որոշումները:		
4.Էստոնիա	Գերագույն դատարանի նախագահը, արդարադատության կանցլերը, շրջանային դատարանի նախագահը, դատարանի նախագահը,	Գերագույն դատարանի կարգապահական պալատի կազմից պալատի նախագահի ընտրած 5 անդամներից կազմված	Գերագույն դատարանի en banc	Դատավորը	Կարգապահական տույժ կիրառելու մասին որոշումը:	Որոշումը փոփոխելը մերժելու մասին, որոշումը փոփոխելու և դատավորին մեղմ կարգապահական զանցանք կատարելու	

	Գերագույն դատարանը en banc	կոլեգիան				համար պատասխանատվության ենթարկելու և նշանակված կարգապահական տույժը մեղմացնելու մասին, էական փոփոխություններ կատարելուց հրաժարվելու և կարգապահական տույժը մեղմացնելու մասին, որոշումը բեկանելու և դատավորին արդարացնելու մասին:	
5.Բուլղար	Բարձրագույն	Բարձրագույն	Բարձրագույն	1. Դատավորը	Բարձրագույն	Սովորական	Բողոքը չի կասեցնում

իա	դատական խորհուրդը համապատասխան վարչական ղեկավարի, Բարձրագույն դատական խորհրդի տեսչության, Բարձրագույն դատական խորհրդի անդամների ոչ պակաս քան 1/5-, Արդարադատության նախարարության առաջարկությամբ	դատական խորհուրդը, իսկ որոշ դեպքերում նաև դատավորի վարչական ղեկավարը, Արդարադատության նախարարը	վարչական դատարանը	2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առաջարկությունն ներկայացրած կողմը	դատական խորհրդի կարգապահական տույժ նշանակելու, կարգապահական տույժ նշանակելու առաջարկը մերժելու մասին որոշումները	բողոքների քննության արդյունքում կայացվող որոշումները	որոշման կատարումը, եթե Բարձրագույն վարչական դատարանը այլ որոշում չի կայացնում: Բողոքը քննվում է Բարձրագույն վարչական դատարանի կոլեգիայի կողմից՝ երեք անձի կազմով՝ այն դատարան ընդունվելու պահից մեկ ամսվա ընթացքում: Բարձրագույն վարչական դատարանի 3 դատավորի կազմով կայացված որոշումը իրավունքի հարցերով կարող է բողոքարկվել Բարձրագույն վարչական դատարանի կոլեգիայում՝ 5 հոգանոց կազմով: 5 անդամից բաղկացած կոլեգիան բողոքը քննում է իրավունքի

							հարցերով:
6.Ուկրաինա	Արդարադատության բարձրագույն խորհուրդի կարգապահական պալատը՝ դատավորի կարգապահական զանցանքի վերաբերյալ դիմումի հիման վրա (կարգապահական դիմում), Կարգապահական պալատի կամ Ուկրաինայի	Արդարադատության բարձրագույն խորհուրդի առնվազն չորս անդամ ներառող կարգապահական պալատը	Արդարադատության բարձրագույն խորհուրդը	1. Դատավորը 2. Կարգապահական դիմում ներկայացրած անձը	Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը մերժելու մասին որոշումները[47]:	1) Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Կարգապահական պալատի որոշումն ամբողջությամբ վերացնելու և կարգապահական վարույթը դադարեցնելու մասին, 2)	Կարգապահական պալատի՝ կարգապահական տույժ նշանակելու մասին որոշման բողոքարկումը իր հերթին կասեցնում է կարգապահական տույժ նշանակելու մասին որոշման գործողությունը: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Կարգապահական պալատը որպես տույժ կիրառել է դատավորի լիազորությունները դադարեցնելու պատասխանատվության միջոցը և այդ որոշումը

[47] Կարգապահական գործ հարուցելու և հարուցումը մերժելու մասին որոշումն ընդունվում է Արդարադատության բարձրագույն խորհուրդի կարգապահական պալատի կողմից և բողոքարկման ենթակա չէ:

	դատավորների Բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախաձեռնությամբ					դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Կարգապահական պալատի որոշումը մասնակի վերացնելու և նոր որոշում ընդունելու մասին, 3) դատավորին կարգապահական պատասխանատվության	բողոքարկվել է: Նման դեպքերում դատավորը հեռացվում է արդարադատություն իրականացնելուց այնքան ժամանակ, մինչև Արդարադատության բարձրագույն խորհուրդը կարգապահական գործով որոշումը վերցնելու մասին որոշում չի կայացնում: Հատկանշական է, որ Ուկրաինայի օրենսդրությամբ կարգապահական գործով բողոքի ընդունումը մերժելու և բողոքը վերադարձնելու հիմքերի շարքում է նաև առանց Կարգապահական պալատի թույլտվության այն ներկայացնելը: Բողոքի

						ենթարկելը մերժելու մասին Կարգապահական պալատի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու և նոր որոշում ընդունելու մասին, 4) Կարգապահական պալատի որոշումը փոփոխելու և կարգապահական տույժի այլ տեսակ նշանակելու մասին,	քննության համար նախատեսված է 60-օրյա ժամկետ՝ ևս 60 օր երկարաձգելու հնարավորությամբ: Ընդ որում, բողոքարկման ընթացքում Արդարադատության բարձրագույն խորհրդի այն անդամները, որոնք հանդիսացել են վիճարկվող որոշումն ընդունած Կարգապահական պալատի անդամներ, չեն մասնակցում բողոքի քննությանը՝ բացառությամբ Կարգապահական պալատի այն անդամի, ով եղել է կարգապահական գործով զեկուցող: Վերջինս իրավունք ունի ելույթ

						5) առանց որևէ փոփոխության Կարգապահական պալատի որոշումը հաստատելու մասին:	ունենալու Արդարադատության բարձրագույն խորհրդի նիստում և ներկայացնել Կարգապահական պալատի որոշման մասին զեկույցը: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Կարգապահական պալատի որոշման դեմ բողոքի քննությունն իրականացվում է օրենքով կարգապահական գործի քննության համար սահմանված կարգով: Կարգապահական պալատի որոշման բողոքարկման քննարկման արդյունքներով կայացված

							Արդարադատության բարձրագույն խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել և վերացվել միայն հետևյալ հիմքերով՝ 1) որոշումը կայացրած Արդարադատության բարձրագույն խորհրդի կազմը այն կայացնելու լիազորություն չի ունեցել, 2) որոշումը չի ստորագրվել դրա ընդունմանը մասնակցած Արդարադատության բարձրագույն խորհրդի անդամներից որևէ մեկի կողմից, 3) Արդարադատության բարձրագույն խորհրդի նիստի մասին դատավորը պատշաճ ձևով չի

							ծանուցվել, 4) որոշման մեջ հղում չի կատարվել դատավորի նկատմամբ կարգապահական տույժի ենթարկելու օրենքով նախատեսված հիմքերին և այն հիմնավորումներին, որոնցով Արդարադատության բարձրագույն խորհուրդը հանգել է համապատասխան եզրահանգումների: Միաժամանակ Արդարադատության բարձրագույն խորհրդի որոշումը, որն ընդունվել է Կարգապահական պալատի որոշման դեմ բողոքի քննության արդյունքում,

							դատարանում բողոքարկելու իրավունք ունենա այն դատավորը, որի նկատմամբ կայացվել է համապատասխան որոշումը, և կարգապահական դիմում ներկայացրած անձը, եթե Արդարադատության բարձրագույն խորհրդի որոշումն ընդունվել է նրա բողոքի հիման վրա: Ընդ որում, եթե դատարանը վերացնում է Կարգապահական պալատի որոշման դեմ բողոքի քննության արդյունքներով ընդունված Արդարադատության բարձրագույն խորհրդի որոշումը,

							Արդարադատության բարձրագույն խորհուրդը կրկին քննում է համապատասխան կարգապահական գործը: Այս դեպքում ևս գործի կրկնակի քննությունն Արդարադատության բարձրագույն խորհուրդն իրականացնում է կարգապահական գործի քննության համար սահմանված ընդհանուր կարգով:
7.Մոլդովա	Դատական տեսչությունը հետևյալ սուբյեկտների դիմումների հիման վրա՝ ա) այն անձի, որի	Կարգապահական կոլեգիան	Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդը	1) Կարգապահական վարույթ հարուցելու համար դիմում ներկայացրած անձը 2) Դատական	Կարգապահական խախտումն արձանագրելու և կարգապահական պատժի կիրառելու մասին, կարգապահական	Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդը՝ ա) անփոփոխ է թողնում Կարգապահական կոլեգիայի	Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի ընդունած որոշումները կարող են բողոքարկվել Քիշնևի Վերաքննիչ պալատ (Վերաքննիչ պալատը բարձրագույն դատական

	իրավունքները խախտվել են դատավորի կատարած արարքի արդյունքում, բ) Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի անդամների, գ) Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի. դ) սեփական նախաձեռնությամբ. ե) Արդարադատության նախարարությա			տեսչությունը 3) Դատավորը	խախտումն արձանագրելու և կարգապահական վարույթի դադարեցնելու մասին, եթե լրացել են կարգապահական պատասխանատվության ենթարկելու ժամկետները, կարգապահական վարույթը կարճելու մասին, եթե կարգապահական խախտում չի կատարվել, կարգապահական վարույթը կարճելու մասին ներկայացված դիմումը հետ կանչելու դեպքում, երբ կողմերը չեն պնդում դիմումի ըստ	որոշումն. բ) բավարարում է բողոքը և կայացնում նոր որոշում:	ատյանն է, որն ապահովում է օրենքների միատեսակ կիրառությունը բոլոր դատական ատյանների համար) դիմում ներկայացրած անձանց, դատական տեսչության կամ այն դատավորի կողմից, ում նկատմամբ կայացվել է այն: Վերաքննիչ պալատում Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի որոշման դեմ բերված բողոքի քննությունը իրականացվում է 5 դատավորի կազմով: Քննության տևողությունը չի կարող լինել 30 օրից ավել: Վերաքննիչ պալատի որոշումները վերջնական են

	ն:				էության քննությանը:		և ուժի մեջ են մտնում ընդունման օրվանից:
8.Խորվաթիա	Պետական դատական խորհուրդի երեք անդամներից բաղկացած Կարգապահական կոմիտեն՝ դատարանի նախագահի, վերադաս դատարանի նախագահի, Գերագույն դատարանի նախագահի և արդարադատության նախարարի,	Պետական դատական խորհուրդի երեք անդամներից բաղկացած Կարգապահական կոմիտեն	Սահմանադրական դատարանը	Դատավորը	Կարգապահական տույժ կիրառելու մասին որոշումները:	Եթե Սահմանադրական դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է, ապա, վերացնում է վիճարկվող որոշումը, և գործը վերադարձնում է Ազգային դատական խորհուրդ՝ քննությունը վերսկսելու նպատակով:	

	Գերագույն դատարանի գլխավոր ասամբլեայի կամ Խորվաթիայի Հանրապետության կառավարության պահանջով:						
9.Լեհաստան	Կարգապահական հանձնակատարը վարույթը սկսում է Արդարադատության նախարարի, Վերաքննիչ դատարանի կամ շրջանային դատարանի	Դատավորների նկատմամբ կարգապահական գործերը քննելու համար ստեղծվում են հետևյալ կարգապահական	Գերագույն դատարանը	1. Մեղադրվող դատավորը 2. կարգապահական հանձնակատարը 3. Ազգային դատական խորհուրդը 4. Արդար	Կարգապահական վարույթի արդյունքում կայացվող որոշումները:		

	նախագահի և վերաքննիչ դատարանի կամ շրջանային դատարանի կոլեգիայի համապատասխան պահանջով, Դատական իշխանության ազգային խորհրդի պահանջով կամ իր նախաձեռնությամբ:	դատարաննեը՝ 1) ստորադասատյանների դատավորիների համար՝ վերաքննիչ դատարաննեում, 2) վերադասատյանների դատավորների համար՝ Գերագույն դատարանում: Գերագույն դատարանի դատավորների կարգապահա		ադատության նախարարը			

		կան գործերը քննվում են միայն Գերագույն դատարանի կողմից:					
10.Ավստրիա	Կարգապահական քննիչը՝ ցանկացած անձի բողոքի հիման վրա	Վերաքննիչ դատարաններում ձևավորված կարգապահական կոլեգիաները	Գերագույն դատարան	1. Կարգապահական պատասխանողը 2. Կարգապահական դատախազը	Կարգապահական վարույթի արդյունքում կայացվող որոշումները:		
11.Բելգիա	Համապատասխան դատարանի նախագահը՝ սեփական նախաձեռնությամբ,	Կարգապահական վարույթ հարուցած մարմինը և կարգապահական	Կարգապահական վերաքննիչ դատարանը	1. Կարգապահական վարույթ հարուցած մարմինը 2. Դատավորը	Կարգապահական վարույթի արդյունքում կայացվող որոշումները:		

	համապատասխան դատարանի դատախազի կամ քաղաքացիների կամ Արդարադատության բարձրագույն խորհուրդի ներկայացրած տեղեկատվության հիման վրա	դատարանը					

Վենետիկի հնաձնաժողովի դիրքորոշումների և համեմատական փորձի ուսումնասիրության հիման վրա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ ԲԴԽ-ի որոշումների բողոքարկման համակարգի հիմնական բաղադրիչների ընդունելի մոտեցումները

1. Կարգապահական պատասխանատվության ենթարկող և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության արդյունքում կայացվող որոշման դեմ բողոքը քննող մարմինը:

Կարևորելով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ ԲԴԽ-ի որոշումների բողոքարկման իրավական հնարավորության նախատեսման անհրաժեշտությունը, հարկ է նաև նկատի ունենալ, որ բողոքարկման մոդելի ընտրությունը պետք է հաշվի առնի ներպետական օրենսդրությամբ, առաջին հերթին Սահմանադրությամբ, այս մարմնի կարգավիճակի առաձնահատկությունները: Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Սահմանադրության 175-րդ հոդվածը նախատեսում է ԲԴԽ-ի լիազորությունները, որոնց թվում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը:

Այս համատեքստում ԲԴԽ-ի կարգավիճակի առանձնահատկություններին և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ԲԴԽ-ի որոշումները դատական ատյաններում բողոքարկելու հարցին անդրադարձել է Սահմանադրական դատարանը: Այսպես, 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ Սահմանադրական դատարանը արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Գործող սահմանադրական կարգավորումների համատեքստում Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների համար ***դասական տարբերակով բողոքարկման նախատեսումը պրակտիկայում կարող էր մի շարք խնդիրներ առաջացնել թե՛ կիրառելիության, թե՛ արդյունավետության առումներով***:

Բացի դրանից, նման կարգավորումը չէր բխի նաև դատական համակարգի գործառնական արդյունավետությունն ապահովելու հարցում Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ պետական մարմնի սահմանադրական կարգավիճակից ու առաքելությունից:

Սահմանադրական դատարանը, ժամանակին գնահատելով Արդարադատության խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու դեպքերում վերջնական ակտ կայացնելու իրավասության սահմանադրականությունը, նշել է, որ «Մեթոդաբանական նշանակության կարևոր հանգամանքն այն է, որ առավելապես գործող դատավորներից ու նաև գիտնական իրավաբաններից կազմված այդ մարմինը սահմանադրական իր իրավասության շրջանակներում ու օրենքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում գնահատում է, թե իր իսկ կողմից դատավորի պարտականությունների համար լիազորված պաշտոնատար անձը որքանով է հավատարիմ իր երդմանը և ինչպես է կատարում պաշտոնական պարտականությունները:

Սահմանադրական դատարանը գտել է, որ այս համակարգն ամբողջական է՝ իր գործառույթների կատարումը ներհամակարգային կայունության ու արդյունավետության ապահովման տեսանկյունից երաշխավորելու հարցում: ***Այն դուրս չի գալիս դատավորի պաշտոնական պարտականությունների կատարումը, նրա ծառայողական պիտանելիությունը գնահատելու սահմանադրական գործառույթի իրականացման շրջանակներից, <u>ինչն այս մարմնի բացառիկ իրավասությունն է:</u> Այս հարցում դատարաններին վերահսկողական լիազորություն վերապահելը կիմաստազրկեր արդարադատության խորհրդի գոյությունն ընդհանրապես՝ որպես դատական իշխանության համակարգում ինքնուրույն ու սահմանադրորեն բացառապես իրեն վերապահված իրավասություն իրականացնող անկախ մարմնի»*** (ՍԴՈ-1063):

Վերահաստատելով մեջբերված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը և ի լրումն դրա՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է՝ հաշվի առնելով Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ պետական մարմնի գործառութային դերը դատարանների և դատավորների անկախության ապահովման հարցում, ինչպես նաև դատական համակարգում ներառված մյուս դատարանների սահմանադրական

գործառույթները, ***Սահմանադրության գործող կարգավորումների պայմաններում որևէ իրավական հնարավորություն առկա չէ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին այդ մարմնի որոշումների իրավաչափությունը Հայաստանի Հանրապետության դատական իշխանության որևէ մարմնում վերանայելու համար:*** Սահմանադրության 175-րդ հոդվածի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման բացառիկ լիազորությունը պատկանում է Բարձրագույն դատական խորհրդին: Նման պայմաններում, եթե Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ ատյանի դատարան վերանայի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը և դրա արդյունքում կայացնի նոր դատական ակտ, օրինակ՝ բեկանի և փոփոխի Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան կայացրած որոշումը, ապա վերջնարդյունքում կստացվի, որ հենց այդ ատյանի դատարանն էլ լուծեց դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այսպիսով, ամբողջ վերոշարադրյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ գործող սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում բացակայում է Հայաստանի Հանրապետությունում գործող դատարաններից որևէ մեկում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման իրավական հնարավորություն, քանի որ դա կհակասի Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ սահմանադրական մարմնի կարգավիճակին: Բացի դրանից, տվյալ որոշումների վերանայումը, դրանով իսկ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը դուրս է Հայաստանի Հանրապետությունում դատարանների սահմանադրական գործառույթների շրջանակներից:

Սահմանադրական դատարանը նույն գործով mutatis mutandis կիրառելի է համարում նաև ՍԴՈ-1063 որոշմամբ արտահայտված իր այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ « …. ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ներկա դատական համակարգի պայմաններում նման որոշումների դատական կարգով բողոքարկումն օրենսդրորեն ամրագրված առկա

շրջանակներից դուրս կարող է աղերսներ ունենալ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների հետ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ արդարադատության խորհրդի կազմի մեջ ներառված են հիմնականում գործող դատավորներ ՀՀ դատական համակարգի տարբեր օղակներից, ներառյալ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը: Նման պայմաններում ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների համակարգում նախատեսված չէ այնպիսի դատական ատյան, որի դատավորներն իրենց կարգավիճակով ավելի բարձր կլինեն ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորներից: Այս կապակցությամբ սույն գործով սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել նաև իր՝ 28.11.2007թ. ՍԴՈ-719 որոշման 5-րդ կետը, որտեղ սահմանադրական դատարանն անընդունելի է համարել հավասար կամ ցածր պետաիշխանական մակարդակի վրա գտնվող դատավորի կողմից նույն դատարանի նախագահի կամ վերադաս ատյանի դատարանների դատավորների գործողությունների (անգործության) վիճարկման վերաբերյալ դիմումները քննության առնելու հնարավորությունը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման դիրքորոշումը հավասարապես կիրառելի է նաև արդարադատության խորհրդի խնդրո առարկա որոշումների նկատմամբ»:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը փաստել է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցերի վերաբերյալ որոշումները ԲԴԽ-ի բացառիկ իրավասությունն է, իսկ այս կապակցությամբ ԲԴԽ-ի որոշումների վերանայման լիազորության վերապահումը դատական ատյաններից որևէ մեկին կհակասի Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ սահմանադրական մարմնի կարգավիճակին և կիմաստազրկեր խորհրդի գոյությունն ընդհանրապես՝ որպես դատական իշխանության համակարգում ինքնուրույն ու սահմանադրորեն բացառապես իրեն վերապահված իրավասություն իրականացնող անկախ մարմնի:

Սահմանադրական դատարանի վերը ներկայացված դիրքորոշման, Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումների և համեմատական փորձի համատեքստում Հայաստանի

Հանրապետության համար դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ ԲԴԽ-ի որոշումների բողոքարկման ընդունելի մոդել կարող է համարվել Ուկրաինայի մոդելը, որում կարգապահական գործի քննությունն իրականացնում ու կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնում է Արդարադատության բարձրագույն խոհրդի կազմից ընտրված 4 անդամից կազմված Կարգապահական պալատը, իսկ վերջինի որոշումների դեմ բողոքները քննում է Արդարադատության բարձրագույն խորհուրդը:

Ընդ որում, հարկ է կարևորել այն հանգամանքը, որ Վենեցիկի հանձնաժողովը «Ուկրաինայում Գերագույն դատարանը և դատական ինքնակառավարվող մարմինները կարգավորող իրավական շրջանակի վերաբերյալ» 2019 թվականի կարծիքում նշել է. «2016 թվականի «Արդարադատության բարձրագույն խորհրդի մասին» օրենքի՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացումը մտնում է Արդարադատության բարձրագույն խորհրդի լիազորությունների մեջ և իրականացվում է կարգապահական պալատների կողմից, որոնց կազմի մեծ մասը պետք է լինեն դատավորներ: Վենեցիկի հանձնաժողովը նշել է, որ գոյություն ունեցող դատական կարգապահությանը վերաբերող ընթացակարգը ընդհանուր առմամբ համապատասխանում է կիրառելի չափանիշներին և, ճիշտ կիրառման դեպքում, պետք է ավելի ադեկվատ հավասարակշռություն ապահովի դատավորների անկախության և հաշվետվողականության միջև[48]:»:

<u>2. Բողոքարկման ենթակա որոշումները և բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբեյկտները:</u>

Համեմատական փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրների մեծամասնությունում բողոքարկման ենթակա են ինչպես դատավորին կարգապահական

[48] CDL-AD(2019)027-e, Ukraine - Opinion on the Legal framework in Ukraine governing the Supreme Court and judicial self-governing bodies, adopted by the Venice Commission at its 121st Plenary Session, Venice, 6-7 December 2019, § 63:

պատասխանատվության ենթարկելու մասին, այնպես էլ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը մերժելու մասին որոշումները: Ավելին, բողոք ներկայացնելու իրավունքը վերապահված է ինչպես դատավորին, այնպես էլ վարույթը հարուցած կամ վարույթ հարուցելու առաջարկություն ներկայացրած սուբյեկտին, ինչը տրամաբանական մոտեցում է թվում, քանի որ հենց վերջիններս են կարգապահական վարույթի կողմերը: Այսպիսով, բողոքարկման ենթակա պետք է լինեն ինչպես դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, այնպես էլ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ ԲԴԽ-ի որոշումները, և բողոք ներկայացնելու իրավունք պետք է ունենան կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորը և կարգապահական վարույթ հարուցած կողմը:

<u>3. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշման դեմ բողոքների քննության առանձնահատկությունները:</u>

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումների դեմ բողոքների քննության առանձնահատկությունները սահմանելիս կախորոշող նշանակություն պետք է ունենա Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշում առ այն, որ բողոքարկման ատյանը ևս պետք է որակվի որպես «դատարան», այսինքն՝ ապահովի բավարար դատավարական երաշխիքներ և ինստիտուցիոնալ առումով անկախ լինի[49]: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում շարադրված երաշխիքները պետք է ամրագրվեն առանձին հոդվածով և կիրառվեն կարգապահական վարույթի բոլոր փուլերում[50]: Ըստ այդմ, դատավորին կարգապահական

[49] CDL-AD(2017)019, Opinion on the Draft Judicial Code of Armenia, §§150-151; CDL-AD(2019)008, Opinion on the Draft Law on the Judicial Council of North Macedonia, §§34-35; CDL-AD(2014)006, Joint opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe, and of the OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR) on the draft law on disciplinary liability of judges of the Republic of Moldova, §§82, 83:

[50] CDL-AD(2014)032, Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate of Human Rights and the Rule of Law (DGI) of the Council of Europe, on the draft Law on making changes to the Law on disciplinary Liability and disciplinary Proceedings of Judges of General Courts of Georgia, §50 :

պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումների դեմ բողոքների քննությունը պետք է իրականացվի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության համար Դատական օրենսգրքով սահմանված հիմնական սկզբունքների և երաշխիքների պահպանմամբ: Այս համատեքստում կարևոր է նաև Վենետիկի հանձաժողովի դիտարկումն առ այն, որ կարգապահական վարույթի դեմ բերված ցանկացած բողոք պետք է խոչընդոտի որոշման վերջնական դառնալուն այնքան ժամանակ, քանի դեռ բողոքը չի քննվել[51]: Ուստի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ ԲԴԽ-ի որոշումը չպետք է մտնի ուժի մեջ մինչև դրա դեմ ներկայացված բողոքի քննության արդյունքում որոշման կայացումը:

4. Բողոքի քննության արդյունքում կայացվող որոշումները:

Համեմատական փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ պետությունների ճնշող մեծամասնությունում բողոքի քննության արդյունքում կայացվում են բողոքարկվող որոշումն անփոփոխ թողնելու, փոփոխելու, վերացնելու մասին որոշումներ: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ ԲԴԽ-ի որոշումների դեմ բողոքների քննության արդյունքում կայացվող որոշումների շրջանակը կանխորոշող կարևոր հանգամանք է այն, որ, ըստ էության, բողոքի քննությունն իրականացվում և որոշումը կայացվում է հենց Բարձրագույն դատական խորհուրդի կողմից, որին Սահմանադրությամբ վերապահված է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու բացառիկ լիազորությունը: Ըստ այդմ, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումների դեմ բողոքների քննությամբ պետք է կայացվեն կարգապահական վարույթի արդյունքը կանխորոշող բոլոր որոշումները: Ըստ այդմ, բողոքի քննության արդյունքում պետք է հնարավոր լինի կայացնել բողոքարկվող որոշումն անփոփոխ թողնելու, դատավորին

[51] CDL-AD(2014)006, Joint opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe, and of the OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR) on the draft law on disciplinary liability of judges of the Republic of Moldova, §§81, 84:

կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը մերժելու, նշանակված կարգապահական տույժը փոփոխելու մասին որոշումներ:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ ԲԴԽ-ի որոշումների բողոքարկման համակարգի հիմնական բաղադրիչների ընդունելի մոտեցումները հավասարապես կիրառելի են նաև դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշումների բողոքարկման հարաբերությունների նկատմամբ:

Ինչ վերաբերում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հաղորդմանը ներկայացվող պահանջներին և կարգապահական վարույթ հարուցող մարմնի կողմից հարուցված կարգապահական վարույթները մեկ վարույթում միավորելու հնարավորությանը, պետք է նշել, որ մի շարք երկրների փորձը ցույց է տալիս, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին հաղորդումը պետք է տեղեկություն պարունակի հաղորդումը ներկայացնող անձի, համապատասխան դատական գործի և դատավորի, հաղորդման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների վերաբերյալ: Նմանատիպ պահանջներ են սահմանված ինչպես Մոլդովայի[52], Ղրղզստանի[53] այնպես էլ Ուկրաինայի[54] համապատասխան օրենքներով: Մոլդովայի օրենսդրությամբ կարգավորվում է նաև դատավորի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները և կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ներկայացված երկու և ավելի միջնորդությունները մեկ վարույթում միավորելու հարցը: Մասնավորապես՝ Մոլդովայի «Դատավորների կարգապահական պատասխանատվության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միևնույն դատավորի դեմ մի քանի դիմում ներկայացվելու դեպքում դրանք միավորվում են մեկ

[52]«Դատավորների կարգապահական պատասխանատվության մասին» https://www.legis.md/cautare/getResults?doc_id=130335&lang=ru.

[53]«Դատական ինքնակառավարման մարմինների մասին» Ղրղզստանի օրենք http://tartip.sot.kg/post/zakon-o-distsiplinarnoj-komissii

[54] «Դատարանակազմության և դատավորների կարգավիճակի մասին» օրենքներ, https://kodeksy.com.ua/ka/zakony_ukraini.htm

վարույթում: Նմանատիպ կարգավորում ունի նաև Վրաստանի «Ընդհանուր դատարանների դատավորների կարգապահական պատասխանատվության և կարգապահական վարույթի մասին» օրենքը, որտեղ նշվում է, որ անկախ տեսուչը, ինչպես նաև Վրաստանի արդարադատության բարձրագույն խորհուրդը, իրենց որոշմամբ իրավունք ունեն մեկ վարույթում միավորել երկու կամ ավելի կարգապահական գործեր, որոնք հարուցվելու են նույն դատավորի նկատմամբ տարբեր հիմքերով[55]: Համանման կարգավորումներ առկա են նաև Ուկրաինայի[56] և Բուլղարիայի[57] օրենսդրություններով:

Հարուցված կարգապահական վարույթները և կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ներկայացված երկու և ավելի միջնորդությունները մեկ վարույթում միավորելու հնարավորության առկայությունը թույլ կտա մի քանի կարգապահական խախտումների համար միայն մեկ անգամ, մեկ վարույթի շրջանակներում քննարկել կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը՝ ավելորդ չծանրաբեռնելով ոչ դատավորին և ոչ էլ Բարձրագույն դատական խորհրդին: Նման կարգավորման նախատեսումը ուղղված կլինի նաև միևնույն դատավորի նկատմամբ անընդհատ տարբեր հիմքերով վարույթների հարուցման պրակտիկայի բացառմանը:

2022 թվականի օգոստոսի 22-ին Արդարադատության նախարարությունը Նախագիծը ներկայացրել է Վենետիկի հանձնաժողովի կարծիքին: Նախագծի վերաբերյալ ներկայացրած կարծիքում[58] Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ Նախագիծը նախատեսում է կարգապահական հարցերով Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման նոր համակարգ՝ երկրորդ ատյանի կոլեգիայի կողմից, որը ստեղծվել է հենց Խորհրդի շրջանակներում: «Վենետիկի հանձնաժողովն

---

[55] Վրաստանի «Ընդհանուր դատարանների դատավորների կարգապահական պատասխանատվության և կարգապահական վարույթի մասին» օրենք, 11-րդ հոդված https://www.matsne.gov.ge/ru/document/view/16774?publication=23

[56] Տե՛ս, Ukraine - Law on the High Council of Justice, article 49 https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF(2020)067-e

[57] Տե՛ս, Standards for disciplinary proceedings and liablilty of judges, page 80 https://www.encj.eu/images/stories/pdf/GA/Hague/encj_report_minimum_standards_v_adopted_ga_june_2015.pdf

[58] CDL-AD(2022)044-e Armenia - Joint Opinion of the Venice Commission and the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI) of the Council of Europe on the draft amendments to the Judicial Code, adopted by the Venice Commission at its 133rd Plenary Session (Venice, 16-17 December 2022).

այն կարծիքին է, որ նոր մեխանիզմը հաշվի է առնում նախարարների կոմիտեի (CM/Rec (2010)12) հանձնարարականի էությունը: Այսպիսով, Բարձրագույն դատական խորհրդի շրջանակներում վերաքննիչ ատյանի ստեղծումը ընդունելի փոխզիջում է թվում»[59]: Միևնույն ժամանակ, Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով Նախագծով առաջարկվող կարգավորումների սահմանադրականության հարցին, նշել է. «Համեմատական տեսանկյունից անսովոր չէ, որ դատական խորհուրդների ենթահանձնաժողովները զբաղվեն որոշակի առաջադրանքներով, մինչդեռ որոշ այլ խնդիրների լուծումը մնում է խորհրդի լիագումար նիստերին: Նման հարցերը կարող են կարգավորվել օրենքով, նույնիսկ եթե Սահմանադրությունը ոչինչ չի ասում աշխատանքի նման բաժանման մասին: Այնուամենայնիվ, օրենսդիրը չպետք է ստեղծի նոր մարմիններ՝ սահմանադրական սահմանափակումները շրջանցելու և ուժերի հավասարակշռությունը խաթարելու համար, որն արտացոլված է ԲԴԽ-ի կազմում: Վենետիկի հանձնաժողովն ընդգծում է, որ օրինագծում առաջարկված մեխանիզմը կոչված է <u>հարգելու</u> այդ հավասարակշռությունը: Երկու կոլեգիաներն էլ բաղկացած են հավասար թվով դատավորներից և ոչ դատավոր անդամներից, ինչը արտացոլում է այդ մարմնի «լիագումար» կազմը: Բացի այդ, երկու կոլեգիաների կազմներն էլ որոշվում է վիճակահանությամբ, ինչը (պատշաճ կատարման դեպքում) բացառում է մանիպուլյացիաների ռիսկը, որոնք կարող են ազդել երկու կոլեգիաների կազմի վրա:»[60]:

բ. Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:

[59] CDL-AD(2022)044-e Armenia - Joint Opinion of the Venice Commission and the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI) of the Council of Europe on the draft amendments to the Judicial Code, adopted by the Venice Commission at its 133rd Plenary Session (Venice, 16-17 December 2022), §48.

[60] CDL-AD(2022)044-e Armenia - Joint Opinion of the Venice Commission and the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI) of the Council of Europe on the draft amendments to the Judicial Code, adopted by the Venice Commission at its 133rd Plenary Session (Venice, 16-17 December 2022), §34, 35:.

Սահմանադրության 7-րդ գլխի համաձայն դատական իշխանությունն իրականացվում է դատարանների և Բարձրագույն դատական խորհրդի կողմից:

Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Սահմանադրության 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական, Վճռաբեկ, վերաքննիչ, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

Սահմանադրության հիման վրա դատական իշխանությանը վերաբերող հարաբերությունները կարգավորվում են Դատական օրենսգրքով:

Այս լույսի ներքո հարկ է նկատել, որ ներկայումս Դատական օրենսգրքում առկա չէ որևէ կարգավորում, որով հնարավոր կլինի սահմանափակել կազմակերպությունների կողմից իրենց անվանումներում «դատավոր» բառի կամ Հայաստանի Հանրապետության դատարանների անվանումների, դրանց բոլոր հոլովաձևերի կամ դրանք ներառող բառակապակցությունների, ինչպես նաև «դատավոր» բառի կամ Հայաստանի Հանրապետության դատարանների անվանումների օտարալեզու իմաստային թարգմանությունների օգտագործումը:

Նման իրավակարգավորման բացակայության պայմաններում կազմակերպությունները, որևէ կապ չունենալով դատական իշխանության հետ, կարող են իրենց անվանումներում ներառել «դատավոր» բառը կամ Հայաստանի Հանրապետության դատարանների անվանումները, դրանց բոլոր հոլովաձևերը կամ դրանք ներառող բառակապակցությունները, ինչպես նաև «դատավոր» բառի կամ Հայաստանի Հանրապետության դատարանների անվանումների օտարալեզու իմաստային թարգմանությունները:

Կազմակերպությունների կողմից իրենց անվանումներում «դատավոր» բառը կամ Հայաստանի Հանրապետության դատարանների անվանումները, դրանց հոլովաձևերը կամ դրանք ներառող բառակապակցությունները կամ օտարալեզու իմաստային թարգմանությունները օգտագործելը կարող է շփոթ առաջացնել հանրության մոտ և այդպիսի կազմակերպությունների կողմից ծավալած գործունեությունը կամ հայտարարությունները կարող են նույնականացվել պետական իշխանության երեք ճյուղերից մեկի՝ դատական իշխանության իրականացման նպատակով Սահմանադրության և Դատական օրենսգրքի հիման վրա գործող դատավորների և դատարանների կողմից ծավալած գործունեության հետ:

Ինչպես վերը նշվել է Սահմանադրությամբ դատական իշխանության իրականացման ապահովումը վերապահվել է միայն դատարաններին և Բարձրագույն դատական խորհրդին: Այս կարգավորումը իրենից ենթադրում է, որ դատական իշխանության մաս չհանդիսացող սուբյեկտների կողմից դատական իշխանության մարմինների հետ ասոցացումը պետք է լինի սահմանափակված, որպեսզի հանրության համար տարընկալումների առիթ չդառնա:

Քննարկվածի համանմանությամբ մինչ 2011 թվականին «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելը, «Փաստաբանության մասին» օրենքով նույնպես առկա չէր որևէ կարգավորում, որը կսահմանափակեր կազմակերպությունների կողմից իրենց անվանման մեջ «փաստաբան» բառի կիրառումը և կազմակերպությունները, աղերս չունենալով փաստաբանական գործունեության հետ, հնարավորություն ունեին հանրությանը ներկայանալ որպես փաստաբանական գրասենյակ: 2011 թվականի դեկտեմբերի 8-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-339-Ն օրենքը, որով արգելվեց կազմակերպությունների կողմից իրենց անվանման մեջ «փաստաբան» բառի, դրա բոլոր հոլովաձևերի կամ այդ բառը ներառող բառակապակցությունների, ինչպես նաև «փաստաբան» բառի օտարալեզու իմաստային թարգմանությունների օգտագործումը, բացառությամբ փաստաբանների պալատի, փաստաբանական դպրոցի և

փաստաբանական գործունեություն իրականացնելու նպատակով փաստաբանի կողմից ստեղծվող կազմակերպությունների:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության» օրենսգրքով նախատեսված է վարչական պատասխանատվություն այն կազմակերպությունների համար, որոնք Օրենքով արգելված բառերը կամ դրանց ածանցյալները օգտագործումն են իրենց անվանման մեջ, մասնավորապես «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության» օրենսգրքի 169.14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Օրենքով արգելված կամ առանց համապատասխան գրանցման (լիցենզիայի) օրենքով սահմանված բառերի կամ դրանց ածանցյալների օգտագործումն իր անվանման մեջ, գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ որևէ կերպ աջակցելը գովազդելուն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում՝

1. Սահմանվելու են դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ ներկայացվող հաղորդումներին ներկայացվող պահանջները:

2. Նախատեսվելու է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին հարցի քննության արդյունքով կայացվող որոշումների, ինչպես նաև դատավորի լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշումների բողոքարկման հնարավորություն:

3. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը իրականացնելու է Բարձրագույն դատական խորհրդի 4 անդամ ընդգրկող կազմը: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությամբ զբաղվող Բարձրագույն դատական խորհրդի կազմը յուրաքանչյուր կարգապահական վարույթով լինելու է տարբեր և ընդգրկելու է դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված երկուական անդամներ:

4. Կարգապահական վարույթ հարուցող մարմնի և Բարձրագույն դատական խոհորդի համար հնարավորություն է նախատեսվելու հարուցված կարգապահական վարույթները և կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ներկայացված երկու և ավելի միջնորդությունները միավորելու մեկ վարույթում:

5. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումներն ուժի մեջ են մտնելու հրապարակման պահից մեկ ամիս հետո:

6. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման դեմ բերված բողոքի քննությունն իրականացնելու է Բարձագույն դատական խորհուրդը՝ տվյալ կարգապահական վարույթով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության կազմում չընդգրկած անդամների կազմով:

7. Բարձրագույն դատական խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության հարցի մասին որոշումների դեմ բողոքի քննությունը իրականացնելու է նույն ընթացակարգով և երաշխիքների պահպանմամբ, ինչ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը:

8. Վենետիկի Հանձնաժողովի առաջարկությամբ հստակորեն սահմանվել է, որ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցի մասին որոշման դեմ ներկայացված բողոքի քննության արդյունքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշման օգտին կողմ են քվեարկել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը[61]:

Մասնավորապես, Նախագծով սահմանվել է, որ Բողոքի քննության արդյունքով Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ընդունվում է խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ բողոքի քննությունն իրկանացնող Բարձրագույն դատական խորհրդի կազմի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան

[61] CDL-AD (2022)044-e Armenia - Joint Opinion of the Venice Commission and the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI) of the Council of Europe on the draft amendments to the Judicial Code, adopted by the Venice Commission at its 133rd Plenary Session (Venice, 16-17 December 2022), §42.

նախատեսված չէ, և եթե քվեարկության արդյունքով որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով որոշում չի ընդունվում, ապա ընդունված է համարվում այն որոշումը, որն առավել բարենպաստ է դատավորի համար:

Միաժամանակ, Նախագծով սահմանվել է, որ բողոքի քննության արդյունքով դատավորը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը կարող է թողնվել անփոփոխ, եթե դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար վիճակահանությամբ ձևավորված Բարձրագույն դատական խորհրդի կազմի կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշմանը կողմ քվեարկած և բողոքը քննող Բարձրագույն դատական խորհրդի կազմի կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը անփոփոխ թողնելու վերաբերյալ որոշմանը կողմ քվեարկած անդամների ընդհանուր թիվը գերազանցում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը:

Այսինքն, դատավորը ենթակա կլինի կարգապահական պատասխանատվության այն դեպքերում, երբ օրինակ՝ նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելուն կողմ են քվեարկել վիճակահանությամբ ձևավորված Բարձրագույն դատական խորհրդի կազմի 4 անդամից 1-ը և բողոքի քննությունն իրականացնող Բարձրագույն դատական խորհրդի կազմից 5-ը, կամ այն դեպքում, երբ օրինակ՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելուն դեմ են քվեարկել վիճակահանությամբ ձևավորված Բարձրագույն դատական խորհրդի կազմի 4 անդամից 4-ը, սակայն բողոքի քննության արդյունքում կողմ են քվեարկել բողոքի քննությունն իրականացնող Բարձրագույն դատական խորհրդի կազմի անդամներից 6-ը:

Հետևապես, անհրաժեշտ է ընդգծել, որ դատավորը՝ բողոքի քննության արդյունքում կարող է կարգապահական պատասխանատվության ենթարկվել միայն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը անփոփոխ թողնելուն կողմ են քվեարկել դատավորի բողոքի քննությունն իրականացնող Բարձրագույն դատական խորհրդի կազմի ընդհանուր թվի կեսից ավելին (հարկ է ընդգծել, որ բողոքի քննությունն իրականացնող Բարձրագույն դատական խորհրդի կազմի ընդհանուր թիվը վեցն է, անկախ այն հանգամանքից, թե բողոքի քննությանը քանի անդամ է մասնակցում, ուստի բողոքի քննության արդյունքում որոշումները կարող են ընդունվել միայն բողոքի քննությունն իրականացնող Բարձրագույն դատական խորհրդի կազմի ընդհանուր թվի՝ 6 անդամից կեսից ավելիի կողմ քվեարկելու դեպքում),

2. ընդհանուր հաշվարկով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշմանը կողմ է քվեարկել Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, ինչը կարող ձևավորվել ինչպես 2 կազմերի քվեարկության արդյունքում, այնպես էլ միայն բողոքի քննությունն իրականացրած Բարձրագույն դատական խորհրդի կազմի քվեարկության արյդունքում:

9. Բողոքի քննության համար նախատեսվելու է մեկամսյա ժամկետ, որի արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը կարողանալու է վերացնել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը և մերժելու դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը, նշանակելու կարգապահական տույժի այլ տեսակ, վերացնելու դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը մերժելու մասին որոշումը և դատավորին ենթարկելու կարգապահական պատասխանատվության և որոշումը թողնել անփոփոխ:

10. Բողոքի քննության արդյունքում Բարձագույն դատական խորհրդի կայացրած որոշումը լինելու է վերջնական և ենթակա չի լինելու բողոքարկման:

11. Կսահմանափակվի կազմակերպությունների կողմից իրենց անվանումներում «դատավոր» բառը կամ Հայաստանի Հանրապետության դատարանների անվանումները,

դրանց հոլովածները կամ դրանք ներառող բառակապակցությունները կամ օտարալեզու իմաստային թարգմանությունները օգտագործելու հնարավորությունը:

Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի կողմից:

Օրենքների ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունները.

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխութուններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է: «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխութուններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում եկամուտերի նվազում կամ ծախսեր չեն սպասվում:

Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Նախագիծը բխում է Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «Դատաիրավական բարեփոխումներ» վերտառությամբ 5.3 կետից, ինչպես նաև Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1133-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից և դրանից բխող գործողությունների ծրագրից: Մասնավորապես, նշված որոշման Հավելված 1-ում Արդարադատության նախարարության թիվ 4-րդ նպատակի («Դատական համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովում») գործողությունների թվում է Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով կայացված որոշումների բողոքարկման իրավական հնարավորության նախատեսումը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 2. 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին հոդվածով.

« Հոդված 5.1. Սույն օրենսգրքում կիրառվող հասկացությունների օգտագործման սահմանափակումը

1. Կազմակերպություններին արգելվում է իրենց անվանման մեջ «դատավոր» բառի կամ Հայաստանի Հանրապետության դատարանների անվանումների, դրանց բոլոր հոլովաձևերի կամ դրանք ներառող բառակապակցությունների, ինչպես նաև «դատավոր» բառի կամ Հայաստանի Հանրապետության դատարանների անվանումների օտարալեզու իմաստային թարգմանությունների օգտագործումը:»:

Հոդված 2. ~~«Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք)~~ Օրենքի 79-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2-րդ մասով.

«2. Բարձրագույն դատական խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցերի լուծման, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի և դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումների դեմ բողոքները քննելու լիազորություններն իրականացնում է սույն օրենսգրքով սահմանված կազմերի միջոցով, որոնք հանդես

են գալիս Բարձրագույն դատական խորհրդի անունից՝ գործելով որպես Բարձրագույն դատական խորհուրդ:»:

Հոդված 32. Օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետը «նիստերը» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի» բառերով:

Հոդված 43. Օրենքի 85-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է ամբողջ կազմով, իսկ կարգապահական վարույթի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 19-րդ գլխի կանոնները՝ սույն հոդվածի պահանջների հաշվառմամբ:»:

Հոդված 54. Օրենքի 88-րդ հոդվածը լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~նոր՝ 8-րդ մասով.

«8. Բարձրագույն դատական խորհրդի՝ սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին և 156.2-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված կազմերում ընդգրկված անդամի ինքնաբացարկը կամ բացարկը չի ընդունվում, եթե սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կազմի անդամների թիվը պակասում է 3-ից, իսկ 156.2-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված կազմի անդամների թիվը՝ 5-ից:»:

Հոդված 65. Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասում՝

3) 7-րդ կետը «հարցը» բառից հետո լրացնել «և քննում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումների դեմ բողոքները» բառերով.

4) 8-րդ կետը «հարցը» բառից հետո լրացնել «և քննում է դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումների դեմ բողոքները» բառերով:

Հոդված 76. Օրենքի 90-րդ հոդվածում՝

4) 2-րդ մասից հանել «ինչպես նաև» բառերը, «հարցերը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի և դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումների դեմ բողոքները» բառերով.

5) լրացնել նոր՝ 3.1.-3.2.-ր դ ~~ին~~ մասերով.

«3.1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի և դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումների դեմ բողոքի վերաբերյալ հարցերով Բարձրագույն դատական խորհրդի նիստերը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը կամ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամը:

3.2. Բարձրագույն դատական խորհրդի նախագահը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի այն կազմի նիստերը, որի կազմում ընդգրկվել է վիճակահանությամբ: Բարձրագույն դատական խորհրդի այն նիստերը, որի կազմում Բարձրագույն դատական խորհրդի նախագահը վիճակահանությամբ չի ընդգրկվել հրավիրում և վարում է այդ կազմում ընդգրկված և Բարձագույն դատական խորհրդի սահմանած կարգով ընտրված անդամը:».

6) 4-րդ մասը «կամ» բառից հետո լրացնել «սույն օրենսգրքով նախատեսված դեպքում՝ նիստը վարելու իրավասություն ունեցող անդամի, ինչպես նաև խորհրդի» բառերով:

Հոդված 8~~7~~. Օրենքի 91-րդ հոդվածի 1-ին մասը~~ում~~ «նախագահը» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքում նաև նիստը հրավիրելու և վարելու իրավասություն ունեցող անդամը,» բառերով:

Հոդված 9~~8~~. Օրենքի 92-րդ հոդվածի 2-րդ մասը~~ում~~ «մասնակցում է խորհրդի» բառերից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում խորհրդի համապատասխան կազմի» բառերով:

Հոդված 10~~9~~. Օրենքի 93-րդ հոդվածում՝

3) 2-րդ մասի~~ում~~ «փոխարինող» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքում նաև նիստը վարելու իրավասություն ունեցող» բառերով.

4) 4-րդ մասի~~ում~~ «կամ նրա» բառերը փոխարինել «, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքում նաև նիստը վարելու իրավասություն ունեցող խորհրդի անդամի կամ նրանց» բառերով:

Հոդված 11~~10~~. Օրենքի 94-րդ հոդվածում՝

3) 6-րդ մասից հանել «Դատավորին և» բառերը, իսկ «ինչպես նաև» բառերից հետո հանել «դատավորի և» բառերը.

4) լրացնել նոր՝ 11-րդ մասով.

«11. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ հարցերը, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցերի մասին որոշումների դեմ բողոքները քննելիս Բարձրագույն դատական խորհրդի ակտերի և դրանց ընդունման կարգի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածով սահմանված կանոնները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:»:

Հոդված 12~~11~~. Օրենքի 113-րդ հոդվածի 7-րդ մասի~~ում~~ և 125-րդ հոդվածի 5-րդ մասի~~ում~~ «օրենսգրքով» բառը փոխարինել «օրենսգրքի 157-րդ հոդվածով» բառերով:

Հոդված 13~~12~~. Օրենքի 141-րդ հոդվածը լրացնել~~ն~~ նոր՝ 1.1- 1.5.-րդ մասերով.

«1.1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության համար Բարձրագույն դատական խորհրդում ձևավորվում է Բարձրագույն դատական խորհրդի չորս անդամ ընդգրկող կազմ:

1.2. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելիս և որոշումներ կայացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անունից հանդես է գալիս սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմը՝ գործելով որպես Բարձրագույն դատական խորհուրդ:

1.3. Յուրաքանչյուր կարգապահական վարույթով ձևավորվում է սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված առանձին կազմ:

1.4. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմում պետք է ընդգրկվեն Բարձրագույն դատական խորհրդի՝ Ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված երկուական անդամներ:

1.5. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմերը ձևավորվում են վիճակահանությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով:»:

Հոդված ~~13~~14. Օրենքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի «եռօրյա ժամկետում» բառերը փոխարինել «երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Հոդված 15~~14~~. Օրենքի 146-րդ հոդվածում՝

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հաղորդման մեջ նշվում են՝

1) հաղորդումը ներկայացնող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, նրա հասցեն, իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա անունից հաղորդում ներկայացնող անձի անունը, ազգանունը և պաշտոնը, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի դեպքում՝ լրիվ անվանումը և պաշտոնատար անձի անունը, ազգանունը և պաշտոնը,

2) հաղորդման ներկայացման համար հիմք հանդիսացած դատական գործի համարը, տվյալ գործով դատավորի անունը, ազգանունը և պաշտոնը (կիրառելի լինելու դեպքում),

3) հիմնավորումներ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության վերաբերյալ,

4) հաղորդումը ներկայացնող անձի պահանջը,

5) ~~հաղորդման ներկայացման ամսաթիվը և հաղորդումը ներկայացնող ֆիզիկական անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունիցներկայացման ամսաթիվը և հաղորդումը ներկայացնող ֆիզիկական անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունի (կիրառելի լինել~~ հաղորդման ներկայացման ամսաթիվը և հաղորդումը ներկայացնող ֆիզիկական անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից հանդես եկող անձի ստորագրությունը, իսկ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի դեպքում՝ համապատասխան պաշտոնատար անձի ստորագրությունը:»:

2) լրացնել նոր 2.1-2.2-րդ մասերով.

«2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների խախտմամբ ներկայացված հաղորդումները վարույթ հարուցող մարմինը վերադարձնում է հաղորդում ներկայացրած անձին և առաջարկում է 15 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել այդ խախտումները: Հաղորդումը սույն մասով սահմանված կարգով վերադարձվում է նաև, եթե հաղորդումը կրկին ներկայացվելու դեպքում թույլ է տրվել սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների այլ նոր խախտում:

2.2. Վարույթ հարուցող մարմինը վարույթ հարուցելիս և իրականացնելիս կաշկանդված չէ հաղորդմամբ ներկայացված իրավական հիմքերով և հիմնավորումներով:».

3) 6-րդ մասը լրացնել նոր՝ 5-րդ կետով.

«5) սույն հոդվածի 2.1-ին մասով սահմանված ժամկետում չեն շտկվել սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների խախտումները:»:

Հոդված 16~~15~~. Օրենքի 147-րդ հոդվածը լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~նոր՝ 11-րդ մասով.

«11. Վարույթ հարուցող մարմնի որոշմամբ միևնույն դատավորի վերաբերյալ, միևնույն խախտումների հիմքերով հարուցված երկու և ավելի կարգապահական վարույթները մինչև սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված որոշումը կայացնելը կարող են միավորվել մեկ վարույթում: Միավորման արդյունքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետը հաշվարկվում է ավելի վաղ հարուցված կարգապահական վարույթի հարուցման օրվանից: Վարույթները միավորելու մասին որոշումը հնգօրյա ժամկետում ուղարկվում է դատավորին, ~~և~~ վարույթ հարուցող մյուս մարմին և հաղորդում ներկայացրած անձանց:»:

Հոդված 17~~16~~. Օրենքի 153-րդ հոդվածում՝

5) վերնագիրը «հարցը» բառից հետո լրացնել «և կայացված որոշումների դեմ բողոքները» բառերով.

6) 1-ին մասում՝

ա) 1-ին կետը «հարցի» բառից հետո լրացնել «կամ բողոքի» բառերով.

բ) լրացնել նոր 6-րդ կետով.

«6) սույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկել իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումը:».

7) 2-րդ մասը «հարցը» բառից հետո լրացնել «և կայացված որոշումների դեմ բողոքները» բառերով.

8) 3-րդ մասը «հարցն» բառը փոխարինել «հարցը և կայացված որոշումների դեմ բողոքն» բառերով:

Հոդված ~~17~~18. Օրենքի 154-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով.

«5. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ընդունվում է խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կազմի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Եթե քվեարկության արդյունքով որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով որոշում չի ընդունվում, ապա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված: Որոշումը կազմում և ստորագրում են սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմի այն անդամները, որոնք քվեարկել են միջնորդությունը մերժելու օգտին:»:

Հոդված 19~~18~~. Օրենքի 155-րդ հոդվածում՝

5) 2-րդ մասի 1-ին կետը «անվանումը և» բառերից հետո լրացնել «դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության սույն օրենքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված» բառերով.

6) 4-րդ մասը~~ում~~ «եզրահանգումը» բառից հետո լրացնել «, որոշման բողոքարկման ժամկետն ու այն մարմինը, որտեղ կարող է ներկայացվել բողոքը» բառերով.

7) 6-րդ մասը~~ում~~ «հրապարակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում,» բառերը փոխարինել «հրապարակվելուց հետո անմիջապես հանձնվում է, իսկ դրա անհնարինության դեպքում հնգօրյա ժամկետում» բառերով.

8) 7-րդ մասը~~ում~~՝

ա) «հրապարակման պահից» բառերից հետո լրացնել «մեկ ամիս հետո» բառերով.

բ) երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշման դեմ բողոք ներկայացվելու և որոշումը չվերացվելու կամ չփոփոխվելու դեպքում այն ուժի մեջ է մտնում բողոքի մասին որոշումը հրապարակելու պահից:»:

Հոդված 20~~19~~. Օրենքի 156.1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 156.1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման դեմ բողոք և բողոքի վերաբերյալ պատասխան ներկայացնելը

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ բողոք կարող է ներկայացվել միայն Բարձագույն դատական խորհուրդ:

2. ~~Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշման դեմ բ~~Բողոք կարող են ներկայացնել՝

1) դատավորը, որի նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում է կայացվել,

2) դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցած մարմինը:

3. ~~Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման դեմ բ~~Բողոք կարող է ներկայացվել որոշման հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

4. Բարձրագույն դատական խորհուրդը բողոքը ստանալուց հետո այն անմիջապես ուղարկում է մյուս կողմին, որը կարող է Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնել բողոքի պատասխան այն ստանալու պահից մեկ շաբաթվա ընթացքում: Պատասխան չներկայացվելու դեպքում հիմք է ընդունվում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքում կողմի ներկայացրած դիրքորոշումը:»:

Հոդված 21~~20~~. Օրենքը 156.1.-րդ հոդվածից հետո լրացնել նոր 156.2-րդ և 156.3-րդ հոդվածներով.

«**Հոդված 156.2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման դեմ բողոքի քննությունը**

1. ~~Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման դեմ բ~~Բողոքի քննությունն իրականացնում է Բարձրագույն դատական խորհուրդը՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման կայացմանը չմասնակցած՝ առավելագույնը վեց անդամ ընդգրկող~~ների~~ կազմով: Սույն մասով նախատեսված կազմում չեն ընդգրկվում Բարձրագույն դատական խորհրդի այն անդամները, որոնք ինքնաբացարկի կամ բացարկի հիմքով սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմում չեն մասնակցել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությանը:

~~2. Սույն օրենսգրքի 88-րդ հոդվածի 6.1-ին մասով սահմանված կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամի ինքնաբացարկի կամ բացարկի հարցի քննությանը մասնակցելն արգելք չէ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կազմում ընդգրկվելու համար:~~

~~3~~2. ~~Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման դեմ բ~~Բողոքը քննելիս և որոշումներ կայացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անունից հանդես է գալիս սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կազմը՝ գործելով որպես Բարձրագույն դատական խորհուրդ:

~~3~~4. Եթե Բարձրագույն դատական խորհրդի՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անդամների թիվը պակաս է 5-ից, ապա բողոքի քննությունը հետաձգվում է մինչև Բարձրագույն դատական խորհրդի կազմի՝ սույն մասով սահմանված նվազագույն թվի համալրումը, բայց ոչ ավելի, քան 3 ամիս ժամկետով: Եթե սույն մասով նախատեսված ժամկետում Բարձրագույն դատական խորհրդի կազմը չի համալրվում, ապա բողոքի քննությունն իրականացվում է անկախ սույն մասով նախատեսված նվազագույն թվից:

~~5~~4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կազմի ձևավորման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:

~~6~~5. Բարձրագույն դատական խորհրդում բողոքը քննվում է այն ստանալու պահից երկամսյա ժամկետում:

~~7~~6. Բարձրագույն դատական խորհրդում բողոքի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սկզբունքների հիման վրա: Բողոքի քննության նկատմամբ կիրառվում են («mutatis mutandis») սույն օրենսգրքով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության համար սահմանված կանոնները, այնքանով, որքանով դրանք կիրառելի են, և եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ:

~~8~~7. Բարձրագույն դատական խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

~~9~~8. Բարձրագույն դատական խորհուրդն ընդունում է նոր ապացույց, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է տվյալ ապացույցը կարգապահական

պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ժամանակ ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

~~10~~9. Բարձրագույն դատական խորհուրդն անդրադառնում է բողոքի հիմքին և դրա հիմնավորումներին, եթե բողոքարկողը տվյալ հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքում:~~,~~ Բացառություն են կազմում այն դեպքերը~~բացառությամբ~~, երբ բողոքարկողը զրկված է եղել այդ հարցի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:

~~11~~10. Բարձրագույն դատական խորհրդում բողոքի քննության ժամանակ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությամբ հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և Բարձրագույն դատական խորհուրդը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս սխալ է թույլ տրվել: Նման դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությամբ հաստատած փաստը, եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի կամ բողոքի քննության ժամանակ հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

~~12~~11. Եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ժամանակ հետազոտված ապացույցների հիման վրա չի հաստատվել որևէ փաստ, որը պետք է հաստատվեր, ապա Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ, եթե բողոքարկողը վիճարկում է հետազոտված ապացույցների հիման վրա այն չհաստատվելը, և եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի կամ բողոքի

քննության ժամանակ հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է նման փաստ հաստատել:

~~13~~12. Բարձրագույն դատական խորհրդում բողոքի քննությունը սկսվում է Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով ընտրված զեկուցող անդամի զեկուցումով, որը ներկայացնում է բողոքում և բողոքի պատասխանում նշված փաստարկները: Զեկուցումից հետո Բարձագույն դատական խորհուրդը լսում է կողմերին:

~~14~~13. Բարձրագույն դատական խորհրդի անդամները կարող են հարցեր ուղղել զեկուցողին, բողոքարկողին և մյուս կողմին:

Հոդված 156.3. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցի մասին որոշման դեմ բողոքի քննության արդյունքով կայացվող որոշումները

4. ~~Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման դեմ բ~~Բողոքի քննության արդյունքով Բարձրագույն դատական խորհուրդը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը՝

6) բողոքը բավարարելու, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը վերացնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը մերժելու մասին.

7) բողոքը բավարարելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը մերժելու մասին որոշումը վերացնելու և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին.

8) բողոքը լրիվ կամ մասնակիորեն բավարարելու և որոշման պատճառաբանական մասը փոփոխելու մասին՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին.

9) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը փոփոխելու և կարգապահական տույժի այլ տեսակ կիրառելու մասին.

10) բողոքը մերժելու և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումն անփոփոխ թողնելու մասին:

5. Բողոքի քննության արդյունքներով կայացված Բարձրագույն դատական խորհրդի որոշումը բաղկացած է ներածական, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

6. Բողոքի քննության արդյունքներով կայացված որոշման ներածական մասում նշվում են՝

1) Բարձրագույն դատական խորհրդի անվանումը և բողոքը քննող կազմը.

2) Բարձրագույն դատական խորհրդում բողոքի քննության վայրը և ժամանակը.

3) բողոքը ներկայացրած կողմի անունը, ազգանունը և պաշտոնը.

4) մյուս կողմի անունը, ազգանունը և պաշտոնը.

5) գործին մասնակցող անձանց անունը, ազգանունը.

6) որոշումը կայացրած կազմը, որոշման կայացման տարին, ամիսը, ամսաթիվը:

4. Բողոքի քննության արդյունքներով կայացված որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշվում են՝

1) կայացված որոշման էության համառոտ շարադրանքը.

2) բողոքի հիմքերն ու հիմնավորումները, բողոքարկողի պահանջը, բողոքի պատասխանի առկայության դեպքում՝ պատասխանը ներկայացրած կողմի դիրքորոշումը և հիմնավորումները.

3) կողմերի բացատրությունները և դիրքորոշումը.

4) այն անձանց բացատրությունները, ցուցմունքները, որոնք հրավիրվել են նիստին.

5) այն ապացույցները կամ հանգամանքները, որոնց վրա հիմնված են Բարձրագույն դատական խորհրդի հետևությունները, ինչպես նաև այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները.

6) նորմատիվ իրավական ակտի այն նորմերը, որոնցով Բարձրագույն դատական խորհուրդը ղեկավարվել է որոշումն ընդունելիս.

7) եզրահանգում՝ բողոքի յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ:

5. Բողոքի քննության արդյունքներով Բարձրագույն դատական խորհրդի որոշման եզրափակիչ մասում նշվում է Բարձրագույն դատական խորհրդի եզրահանգումը:

6. ~~Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցի մասին որոշման դեմ ներկայացված բ~~Բողոքի քննության արդյունքով Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ընդունվում է խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ սույն օրենսգրքի 156.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կազմի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով: Եթե քվեարկության արդյունքով որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով որոշում չի ընդունվում, ապա ընդունված է համարվում այն որոշումը, որն առավել բարենպաստ է դատավորի համար, իսկ որոշումը կազմում և ստորագրում են սույն օրենսգրքի 156.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կազմի այն անդամները, որոնք քվեարկել են այդ որոշման օգտին:

7. ~~Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցի մասին որոշման դեմ ներկայացված բողոքի քննության արդյունքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված, եթե դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու օգտին կողմ են քվեարկել սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին և 156.2-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված կազմերում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի~~

~~քննությանը մասնակցած խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը, բայց ոչ պակաս քան խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը:~~

Բողոքի քննության արդյունքով դատավորը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը կարող է թողնվել անփոփոխ, եթե սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կազմում կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշմանը կողմ քվեարկած և 156.2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կազմում կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը անփոփոխ թողնելու վերաբերյալ որոշմանը կողմ քվեարկած անդամների ընդհանուր թիվը գերազանցում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը:

8. Բարձրագույն դատական խորհրդի՝ բողոքի քննության արդյունքով կայացված որոշումը կազմվում և դրա եզրափակիչ մասը հրապարակվում է Բարձրագույն դատական խորհրդի նիստում հարցի քննությունն ավարտված հայտարարելուց հետո՝ 15 օրվա ընթացքում:

9. Որոշումը հրապարակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, ուղարկվում է վարույթ հարուցող մարմիններ և դատավորին:

~~8~~10. Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:»:

Հոդված 22~~21~~. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքի 4-րդ և 12-րդ հոդվածների հիման վրա վիճակահանության կարգ սահմանող՝ Բարձրագույն դատական խորհրդի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահին:~~

~~2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված կարգապահական վարույթների, այդ թվում՝ ավարտված կարգապահական վարույթների, և այդ~~

~~վարույթների արդյունքով կայացված որոշումների նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգավորումները:~~

~~3. Բարձրագույն դատական խորհուրդը սույն օրենքից բխող որոշումներն ընդունում, այդ թվում՝ իր աշխատակարգը սույն օրենքին համապատասխանեցնում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:~~

1. Սույն օրենքի 1-ին հոդվածը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Այն կազմակերպությունները, որոնք մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը իրենց անվանումներում օգտագործել են սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող սահմանափակումները, պարտավոր են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում իրենց անվանումները համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետում իրենց անվանումները սույն օրենքի պահանջներին չհամապատասխանեցրած կազմակերպությունները ենթակա են վարչական պատասխանատվության:

4. Սույն օրենքի 2-21-րդ հոդվածները ուժի մեջ է մտնում սույն օրենքի 12-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 141.1-ին հոդվածի 1.5-րդ մասի հիման վրա ընդունված Բարձրագույն դատական խորհրդի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահին:

5. Մինչև սույն օրենքի 2-21-րդ հոդվածների ուժի մեջ մտնելը հարուցված կարգապահական վարույթների, այդ թվում՝ ավարտված կարգապահական վարույթների, և այդ վարույթների արդյունքով կայացված որոշումների նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգավորումները:

6.Բարձրագույն դատական խորհուրդը սույն օրենքի 2-21-րդ հոդվածներից բխող որոշումներն ընդունում, այդ թվում՝ իր աշխատակարգը սույն օրենքին համապատասխանեցնում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-567-25.04.2023,06.06.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված**	**Նախագծի առաջին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.** 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին հոդվածով. **« Հոդված 5.1. Սույն օրենսգրքում կիրառվող հասկացությունների օգտագործման սահմանափակումը** 1. Կազմակերպություններին արգելվում է իրենց անվանման մեջ «դատավոր» բառի կամ Հայաստանի Հանրապետության դատարանների անվանումների, դրանց բոլոր	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հոլովածների կամ դրանք ներառող բառակապակցությունների, ինչպես նաև «դատավոր» բառի կամ Հայաստանի Հանրապետության դատարանների անվանումների օտարալեզու իմաստային թարգմանությունների օգտագործումը:» և Նախագծի հոդվածների համարակալումը փոխել լրացվող հոդվածին համապատասխան: Առաջարկությունն ուղղված է սահմանափակելու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության դատարանների անվանումների, դրանց հոլովածների կամ դրանք ներառող բառակապակցությունների կամ օտարալեզու իմաստային թարգմանությունների օգտագործման հնարավորությունը:		
2.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 4-րդ հոդված**	Նախագծի 4-րդ հոդվածում «հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «նոր» բառով: Առաջարկությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվախի 11-րդ մասից:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 5-րդ հոդված**	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետի «և քննում է դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումների դեմ բողոքները» բառերից հետո լրացնել «բառերով» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Առաջարկությունն ուղղված է տեխնիկական վրիպակը շտկելուն:		
4.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 6-րդ հոդված**	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող «լրացնել նոր 3.1-ին մասով» բառերը փոխարինել «լրացնել նոր՝ 3.1.-3.2.-րդ մասերով» բառերով և 3.1.-3.2.-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3.1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի և դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումների դեմ բողոքի վերաբերյալ հարցերով Բարձրագույն դատական խորհրդի նիստերը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը կամ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամը: 3.2. Բարձրագույն դատական խորհրդի նախագահը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի այն կազմի նիստերը, որի կազմում ընդգրկվել է վիճակահանությամբ: Բարձրագույն դատական խորհրդի այն նիստերը,	Ընդունվել է:	Ընդունվել է:

			որի կազմում Բարձրագույն դատական խորհրդի նախագահը վիճակահանությամբ չի ընդգրկվել հրավիրում և վարում է այդ կազմում ընդգրկված և Բարձագույն դատական խորհրդի սահմանած կարգով ընտրված անդամը:»: Առաջարկությունն ուղղված է կարգապահական գործերով Բարձրագույն դատական խորհրդի նիստերի հրավիրման և վարման կարգը հստակեցնելուն:		
5.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածում «մասում» բառը փոխարինել «մասը» բառով: Առաջարկությունն ուղղված է տեխնիկական վրիպակը շտկելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 8-րդ հոդված**	Նախագծի 8-րդ հոդվածում «մասում» բառը փոխարինել «մասը» բառով: Առաջարկությունն ուղղված է տեխնիկական վրիպակը շտկելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 9-րդ հոդված**	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում «մասում» բառը փոխարինել «մասի» բառով: Առաջարկությունն ուղղված է տեխնիկական վրիպակը շտկելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:
8.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 10-րդ հոդված**	Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ կետում «նոր» բառից հետո լրացնել «՝» նշանը և «բողոքը» բառը փոխարինել «բողոքները» բառով: Առաջարկությունն ուղղված է տեխնիկական վրիպակը շտկելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:

9.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 11-րդ հոդված**	Նախագծի 11-րդ հոդվածում «մասում» բառերը փոխարինել «մասի» բառերով: Առաջարկությունն ուղղված է տեխնիկական վրիպակը շտկելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:
10.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 12-րդ հոդված**	Նախագծի 12-րդ հոդվածում «Օրենքի 141-րդ հոդվածը լրացնելն նոր 1.1-1.5.-րդ մասերով.» բառերը փոխարինել «Օրենքի 141-րդ հոդվածը լրացնել նոր՝ 1.1- 1.5.-րդ մասերով.» բառերով: Առաջարկությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվախի 11-րդ մասից:	Ընդունվել է:	Ընդունվել է:
11.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 14-րդ հոդված**	Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին կետով Օրենքի 146-րդ հոդվածի փոփոխվող 2-րդ մասի 5-րդ կետի «հաղորդման ներկայացման ամսաթիվը և հաղորդումը ներկայացնող ֆիզիկական անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունիցներկայացման ամսաթիվը և հաղորդումը ներկայացնող ֆիզիկական անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունի (կիրառելի լինել» բառերը փոխարինել «հաղորդման ներկայացման ամսաթիվը և հաղորդումը ներկայացնող ֆիզիկական անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից հանդես եկող անձի ստորագրությունը, իսկ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի դեպքում՝ համապատասխան	Ընդունվել է:	Ընդունվել է:

			պաշտոնատար անձի ստորագրությունը:» բառերով: Առաջարկությունն ուղղված է տեխնիկական վրիպակը շտկելուն:		
12.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 14-րդ հոդված**	Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող 2.1-ին հոդվածում «այլ» բառից հետո լրացնել «նոր» բառը: Առաջարկությունն ուղղված է փոփոխություններով առաջարկվող պահանջը հստակեցնելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:
13.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 14-րդ հոդված**	Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող 2.2-րդ հոդվածում «ներկայացված» բառից հետո լրացնել «իրավական» բառը: Առաջարկությունն ուղղված է փոփոխություններով առաջարկվող պահանջը հստակեցնելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:
14.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 15-րդ հոդված**	Նախագծի 15-րդ հոդվածում «հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «նոր՝» բառով: Առաջարկությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մասից:	Ընդունվել է:	Ընդունվել է:
15.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 15-րդ հոդված**	Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին կետով լրացվող 11-րդ մասի «Վարույթները միավորելու մասին որոշումը հնգօրյա ժամկետում ուղարկվում է դատավորին և վարույթ հարուցող մյուս մարմին:» նախադասությունը փոխարինել «Վարույթները միավորելու մասին որոշումը հնգօրյա ժամկետում ուղարկվում է	Ընդունվել է:	Ընդունվել է:

			դատավորին, վարույթ հարուցող մյուս մարմին և հաղորդում ներկայացրած անձանց:» նախադասությամբ: Առաջարկությունն ուղղված է փոփոխություններով առաջարկվող պահանջը հստակեցնելուն:		
16.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 18-րդ հոդված**	Նախագծի 18-րդ հոդցածի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում «մասում» բառը փոխարինել «մասը» բառով: Առաջարկությունն ուղղված է տեխնիկական վրիպակը շտկելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:
17.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 19-րդ հոդվածով**	Նախագծի 19-րդ հոդվածի փոփոխվող 156.1-ին հոդվածի 2-րդ մասի «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշման դեմ բողոք կարող են ներկայացնել՝» բառերը փոխարինել «Բողոք կարող են ներկայացնել՝» բառերով: Առաջարկությունն ուղղված է տեխնիկապես տեքստը առավել ընթեռնելի դարձնելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:
18.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 19-րդ հոդվածով**	Նախագծի 19-րդ հոդվածով փոփոխվող 156.1-ին հոդվածի 3-րդ մասի «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման դեմ բողոք կարող է ներկայացվել որոշման հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:» բառերը փոխարինել «Բողոք կարող է ներկայացվել	Ընդունվել է:	Ընդունվել է:

			որոշման հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:» բառերով: Առաջարկությունը ուղղված է տեխնիկապես տեքստը առավել ընթեռնելի դարձնելուն:		
19.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 20-րդ հոդվածով**	Նախագծի 20-րդ հոդվածով լրացվող 156.2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բողոքի քննությունն իրականացնում է Բարձրագույն դատական խորհուրդը՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման կայացմանը չմասնակցած՝ առավելագույնը վեց անդամ ընդգրկող կազմով: Սույն մասով նախատեսված կազմում չեն ընդգրկվում Բարձրագույն դատական խորհրդի այն անդամները, որոնք ինքնաբացարկի կամ բացարկի հիմքով սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմում չեն մասնակցել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությանը:» Առաջարկությունն ուղղված է Օրենքով նախատեսվածը պահանջը հստակեցնելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:
20.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 20-րդ հոդվածով**	Նախագծի 20-րդ հոդվածով լրացվող 156.2-րդ հոդվածի 2-րդ մասը հանել և համարակալումը փոխել՝ լրացվող մասերին համապատասխան: Առաջարկությունն ուղղված է Նախագծում՝ տեխնիկական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			վրիպակի արդյունքում մնացած կարգավորումը հանելուն:		
21.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 20-րդ հոդվածով**	Նախագծի 20-րդ հոդվածով լրացվող 156.2-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Բողոքը քննելիս և որոշումներ կայացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անունից հանդես է գալիս սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կազմը՝ գործելով որպես Բարձրագույն դատական խորհուրդ:»: Առաջարկությունն ուղղված է տեխնիկապես տեքստը առավել ընթեռնելի դարձնելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:
22.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 20-րդ հոդվածով**	Նախագծի 20-րդ հոդվածով լրացվող 156.2-րդ հոդվածի 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Բարձրագույն դատական խորհուրդն անդրադառնում է բողոքի հիմքին և դրա հիմնավորումներին, եթե բողոքարկողը տվյալ հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքում: Բացառություն են կազմում այն դեպքերը բացառությամբ, երբ բողոքարկողը զրկված է եղել այդ հարցի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդում գործի քննության ժամանակ իր	Ընդունվել է:	Ընդունվել է:

			դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:»: Առաջարկությունն ուղղված է փոփոխություններով առաջարկվող պահանջը հստակեցնելուն:		
23.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 20-րդ հոդվածով**	Նախագծի 20-րդ հոդվածով լրացվող 156.3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բողոքի քննության արդյունքով Բարձրագույն դատական խորհուրդը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը՝»: Առաջարկությունն ուղղված է տեխնիկապես տեքստը առավել ընթեռնելի դարձնելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:
24.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 20-րդ հոդվածով**	Նախագծի 20-րդ հոդվածով լրացվող 156.3-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բողոքի քննության արդյունքով Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ընդունվում է խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ սույն օրենսգրքի 156.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կազմի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով: Եթե քվեարկության արդյունքով որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով որոշում չի ընդունվում, ապա ընդունված է համարվում այն որոշումը, որն առավել բարենպաստ է դատավորի համար, իսկ որոշումը	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կազմում և ստորագրում են սույն օրենսգրքի 156.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կազմի այն անդամները, որոնք քվեարկել են այդ որոշման օգտին»: Առաջարկությունն ուղղված է փոփոխություններով առաջարկվող պահանջը հստակեցնելուն:		
25.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 20-րդ հոդվածով**	Նախագծի 20-րդ հոդվածով լրացվող 156.3-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բողոքի քննության արդյունքով դատավորը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը կարող է թողնվել անփոփոխ, եթե սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կազմում կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշմանը կողմ քվեարկած և 156.2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կազմում կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը անփոփոխ թողնելու վերաբերյալ որոշմանը կողմ քվեարկած անդամների ընդհանուր թիվը գերազանցում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ընդհանուր թվի առնվազն կեսը:»: Առաջարկությունն ուղղված է փոփոխություններով առաջարկվող պահանջը հստակեցնելուն:		
26.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 20-րդ հոդվածով**	Նախագծի 20-րդ հոդվածով լրացվող 156.3-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «8. Բարձրագույն դատական խորհրդի՝ բողոքի քննության արդյունքով կայացված որոշումը կազմվում և դրա եզրափակիչ մասը հրապարակվում է Բարձրագույն դատական խորհրդի նիստում հարցի քննությունն ավարտված հայտարարելուց հետո՝ 15 օրվա ընթացքում:» Առաջարկության ընդունման արդյունքում ակնկալվում է հստակեցնել Բարձրագույն դատական խորհրդի՝ բողոքի քննության արդյունքով որոշումը հրապարակելու ժամկետը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
27.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 20-րդ հոդվածով**	Նախագծի 20-րդ հոդվածով լրացվող 156.3-րդ հոդվածը լրացնել նոր՝ 9-10-րդ մասերով. «9. Որոշումը հրապարակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, ուղարկվում է վարույթ հարուցող մարմիններ և դատավորին: 10. Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:» Առաջարկության ընդունման	Ընդունվել է:	Ընդունվել է:

			արդյունքում ակնկալվում է հստակեցնել Բարձրագույն դատական խորհրդի՝ բողոքի քննության արդյունքով որոշումը կողմերին ուղարկելու ժամկետը:		
28.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 21-րդ հոդվածը**	Նախագծի 21-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «1. Սույն օրենքի 1-ին հոդվածը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 2. Այն կազմակերպությունները, որոնք մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը իրենց անվանումներում օգտագործել են սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող սահմանափակումները, պարտավոր են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում իրենց անվանումները համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին: 3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետում իրենց անվանումները սույն օրենքի պահանջներին չհամապատասխանեցրած կազմակերպությունները ենթակա են վարչական պատասխանատվության: 4. Սույն օրենքի 2-21-րդ հոդվածները ուժի մեջ է մտնում սույն օրենքի 12-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 141.1-ին հոդվածի 1.5-րդ մասի հիման վրա ընդունված Բարձրագույն դատական խորհրդի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			մտնելու պահին: 5. Մինչև սույն օրենքի 2-21-րդ հոդվածների ուժի մեջ մտնելը հարուցված կարգապահական վարույթների, այդ թվում՝ ավարտված կարգապահական վարույթների, և այդ վարույթների արդյունքով կայացված որոշումների նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգավորումները: 6.Բարձրագույն դատական խորհուրդը սույն օրենքի 2-21-րդ հոդվածներից բխող որոշումներն ընդունում, այդ թվում՝ իր աշխատակարգը սույն օրենքին համապատասխանեցնում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում: Առաջարկությունն ուղղված է Նախագծի եզրափակիչ մասը և անցումային դրույթները Նախագծում կատարված փոփոխություններին համապատասխանեցնելուն:		
29.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի հիմնավորում**	Նախագծի հիմնավորումը լրամշակվել է Նախգծում կատարված փոփոխություններին համապատասխան: Առաջարկությունն ուղղված է նախագծի հիմնավորումը նախագծում կատարված լրացումներին և փոփոխություններին համապատասխանեցնելուն և փոփոխությունների ճիշտ մեկնաբանմանը նպաստելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է: